

ՅՏԴ 811.19
ԳՄԴ 81.23
Դ 477

**Ն.Յ. ԴԻԼԲԱՐՅԱՆ, Ա.Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Ա.Լ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ**

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Գրախոս՝ Բ.Գ.Ք. Գարիկ Մկրտչյան
Մասնագիտական խմբագիր՝ Բ.Գ.Ք. Խաչիկ Հարությունյան

**ՀԱՅԵՐԵՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԿՐԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վարժություններ, թելադրության նյութեր, բնագրեր
Երկրորդ բարեփոխված հրատարակություն

Դիլբարյան Ն.
Դ 477 Հայերենի ավանդական ուղղագրությունը և միջին դարերում կրած փոփոխությունները/Ն.Դիլբարյան, Ա.Խաչատրյան, Ա. Յուզբաշյան. – Եր.: Գիտություն, 2015, 84 էջ:

Ուսումնամեթոդական այս ձեռնարկում ի մի են բերված հայերենի դասական ուղղագրության կանոնները՝ համապատասխան բառացանկերով, կազմված են վարժություններ՝ ուղղագրական բարդություն ունեցող բառերի ընդգրկմամբ, ինչպես նաև թելադրության նյութեր դասական շրջանի մատենագրության բնագրերից՝ տեսական կանոնների առավել ամբողջական յուրացման համար: Ներկայացված են միջին դարերում դասական ուղղագրության կրած պատմական փոփոխությունները, որոնք ըստ էության հետագա շրջանի ուղղագրական բարեփոխումների առիթ դարձան:

Գիրքը նախատեսված է գրաբարը և դասական ուղղագրությունը, ինչպես նաև նրա պատմական զարգացման ընթացքն ուսումնասիրողների համար:

Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2015

ISBN 978-5-8080-1149-6
© Ն.Յ. ԴԻԼԲԱՐՅԱՆ, 2015
© Ա.Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, 2015
© Ա.Լ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, 2015

ՆԱԽԱԲԱՆ

Հայերենի դասական ուղղագրության կանոնները մշակվել են դարերով, մեսրոպյան գրերի ստեղծման պահից մինչև հայոց մշակագրերով ինքնուրույն եւ թարգմանական հարուստ գրականության ստեղծումը: Այս ուղղագրությամբ մեզ ավանդված է հսկայածավալ գրավոր ժառանգություն՝ V դարից մինչև XXI դար: Դասական ուղղագրությունը կենսունակ է ցայսօր, որովհետև արևմտահայ գրական լեզուն գրեթե չի բարեփոխել այն: Հայկական Սփյուռքը շարունակում է հետելել դարերով մշակված ուղղագրական ավանդական այս համակարգին, արեւմտահայ գրականությունը, մամուլը մասնակի փոփոխություններով գրվել և գրվում են հին ուղղագրությամբ: Ուստի դասական ուղղագրության կանոնների իմացությունը կօգնի ոչ միայն գրաբար բնագրերի ընթերցանությանն ու ուսուցմանը, ինչպես նաև դրանց վերարտադրությանը, այլև սփյուռքյան գրականության և մամուլի լիարժեք ընկալմանը: Աներկբա է, որ հայ ժողովրդի և հայոց լեզվի պատմության տարբեր շրջանները լիարժեք ուսումնասիրելու, անցյալի, ինչպես նաև ներկայումս ստեղծվող գրավոր մշակույթի հետ հաղորդակցվելու համար դասական ուղղագրության իմացությունը պարզապես անհրաժեշտություն է:

Այս ձեռնարկ-ժողովածուն նպատակաուղղված է դասական ուղղագրության կանոնների յուրացմանը: Ուղղագրության իմացությունը հիմնված է հիշողության վրա, այդ նպատակով էլ տեսական նյութի, բառացանկերի ներկայացման հետ մեկտեղ, յուրաքանչյուր կանոնի համար բերել ենք համապատասխան վարժություններ, առաջադրանքներ, որոնց կատարումը կնպաստի նյութի ամրակայմանը հիշողության մեջ: Վերջում բերված են թելադրության նյութեր գրաբարի դասական շրջանի գրականությունից:

Երկրորդ բարեփոխված հրատարակության մեջ «Հայերենի ավանդական ուղղագրությունը

եւ միջին դարերում կրած փոփոխությունները» նպատակ ենք հետապնդել ներկայացնելու դասական ուղղագրության ողիսականը միջին հայերենով ստեղծված գրավոր հուշարձաններում: XII - XVIII դարերում ստեղծված գրական հուշարձաններում ակնհայտ երևան են գալիս հայերենի հնչյունական համակարգի փոփոխությունները, որոնք էլ ուղղակիորեն պատճառ են դառ-

նում գրաբարյան երկբարբառների, եռաբարբառների, ձայնավորների և բաղաձայնների ուղղագրության վերածկումները, ընդ որում միասնական գրական լեզվի բացակայությունը, բարբառային տարբերակվածության խորացումը հանգեցնում են դասական ուղղագրության հիմքերի կտրուկ սասանման, ուղղագրական անմիօրինակության:

Նոր այս հրատարակության մեջ վեր են հանված Ժ-ԺՆ դարերում հայերենի ուղղագրական վիճակը, համակարգային փոփոխությունների ընդհանուր միտումները՝ է-ե ձայնավորների ուղղագրական փոխանցումները, աւ > օ > ո ուղղագրական անցումը, յ –ի, վ-ու-ւ հնչյունների ուղղագրությունը, գրաբարյան երկբարբառների, եռաբարբառների և բաղաձայնների ուղղագրության փոփոխությունները միջին դարերում: Հավարտ, իբրև տեսական նյութի ամփոփում, ներկայացրել ենք միջնադարում ուղղագրական փոփոխությունները վկայող բնագրային տեքստերի ծաղկաքաղ:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Մեսրոպյան այբուբենը ստեղծվել է 5-րդ դարի սկզբներին «մեկ հնչույթին՝ մեկ գիր, մեկ գրին՝ մեկ հնչույթ» սկզբունքով: Այն ուներ 36 տառ: Ի տարբերություն աշխարհի այլ լեզուների այբուբենների՝ հայերենի այբուբենն առանձնանում է իր ինքնատիպությամբ և թվային արժեքով: Մինչև արաբական թվանշանների փոխառումը և տարածումը հայոց տառերը միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և հազարավորներ արտահայտող միակ նշաններն էին, որոնք իրենց թվանիշ գործառույթը չեն կորցրել նաև այսօր՝ ԻԱ (21-րդ) դարում:

Հայերենի քառաշարք այբբենական համակարգում տեղ չի գտել ը պարզ ձայնավորը, հետևաբար այն թվանիշ արժեք չունի: Քանի որ սույն ձայնավորը բաղկացած է երկու տառերի միացությունից՝ *n + l*, ենթադրվում է, որ հին հայերենի վաղ շրջանում՝ դասական գրաբարից առաջ, ունեւ երկբարբառ է եղել՝ ոու արտասանությամբ:

Ա	այբ	1	ժ	ժե	10	ճ	ճե	100	Ռ	ռա	1000
Բ	բեն	2	Ի	ինի	20	ժ	մեն	200	Ս	սե	2000
Գ	գին	3	Լ	լուն	30	Յ	հի	300	Վ	վեվ	3000
Դ	դա	4	Խ	խե	40	Ն	նու	400	Տ	տյուն	4000
Ե	եչ	5	Ծ	ծա	50	Շ	շա	500	Ր	րե	5000
Զ	զա	6	Կ	կեն	60	Ո	ո	600	Ց	ցո	6000
Է	է	7	Հ	հո	70	Չ	չա	700	Ի	վյուն (հյուն)	7000
Ը	ըթ	8	Չ	ձա	80	Պ	պե	800	Փ	փյուր	8000
Թ	թո	9	Ղ	ղատ	90	Ջ	ջե	900	Ք	քե	9000

Այսպիսով, յուրաքանչյուր տառ համապատասխան թվային նշանակություն ունի՝ ինչպես քանակական, այնպես էլ դասական թվականներին համարժեք: Օրինակ, Ա = 1 և առաջին, Բ = 2 և երկրորդ, Գ = 3 և երրորդ և այլն: Եթե պետք է արտահայտել, դիցուք, 301 թիվը կամ թվականը, ապա այն կգրառվի որպես ՅԱ, 405-ը՝ ՆԵ, 2009-ը՝ ՍԹ տառերով: Սովորաբար թվային նշանակությամբ տառերի սկզբից և վերջից դրվում էր միջակետ կամ վերջակետ դրանք բառերից հստակ տարանջատելու համար՝ .ՆՁ., :ՌՃԺ., երբեմն էլ՝ սկզբից վերջակետ, իսկ

վերջում միջակետ էր դրվում :ՆՁ. կամ հակառակը՝ .ՆՁ: Թիվ արտահայտող տառերի վրա երբ դրվում էր բյուրի նշանը (→), ապա տվյալ թիվը մեծացվում էր տասը

↖ ↗ ↘
հազարով՝ Ա = 10000, Բ = 20000, Զ = 60000 և այլն:

Հայերենի դասական ուղղագրությունը

Ուղղագրությունը գրության կանոնների համակարգն է: Մեսրոպյան կամ դասական ուղղագրությունը հնչույթային գրություն է: Բայց և միաժամանակ գործում են ուղղագրական մասնակի կանոններ ձայնավորների, ձայնորդների, երկբարբառների և եռբարբառների, մասամբ նաև վլ հնչյունի գրության և արտասանության վերաբերյալ: Այդ կանոնները մշակվել են դարեր առաջ, բայց այսօր էլ գործում են ոչ միայն գրաբարյան տեքստերի վերարտադրության, այլև արդի արևմտահայերենում՝ աննշան փոփոխություններով: Ուստի այդ կանոնների հիմնովին յուրացումը թույլ կտա արևելահայերեն տեքստերը դյուրությամբ փոխարկել սփյուռքում ընդունված դասական ուղղագրության:

Է/Ե ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Է տառի թվային արժեքն է՝ յոթ, յոթերորդ: Մեսրոպյան այբուբենում է հնչյունը երկբարբառային (ե+յ) հնչյուն է եղել և արտասանվել է էյ՝ սեր-սէյր, այսինքն՝ է ձայնավորը սկզբնապես եղել է փակ, իսկ ե-ն՝ բաց հնչյուն: Արտասանական այս տարբերությամբ է պայմանավորված է և Ե գրանշանների ստեղծման անհրաժեշտությունը:

Դասական ուղղագրության կանոնների համաձայն՝ բառավերջում է հնչյունը միշտ արտահայտվում է է տառով, այսինքն՝ արդի արևելահայ ուղղագրությամբ բառավերջում Ե ունեցող բոլոր բառերը դասական տարբերակում ունեն է: Օրինակ՝ աշտէ, ափսէ, բազէ, գուցէ, թէ, եթէ, երբէ, երբէկցէ, որէ, որկէկցէ, մանրէ, միջօրէ, թոպէ, Կարիւնէ, Յեղիւնէ, Յոփսիսիւնէ, Մարիւնէ, Վահէ և այլն:

Արտասանվող է-ն գրվում է է՝

1. Բառասկզբում՝ էական, էապէս, էգ, էշ, էջ, էութիւն:

2. Բառամիջում, երբ բառաթեքման կամ բառաբարդման ժամանակ է>ի հնչյունափոխություն է կատարվում՝

գէտ - գիտուն

գէր - գիրանալ

հէն (աւազակ) - հինի

սէզ - սիզախոտ, սիզաւետ

վէմ - վիմագիր

տէր - տիրակալ

վէպ - վիպասան

վէր - վիրակապ

վէճ - վիճել

վրէժ - վրիժառու

քէն - քինախնդիր

Այս կանոնին ենթարկվող արմատական բառերը, բարդության երկրորդ բաղադրիչ դառնալով, պահպանում են է-ով գրությունը՝ ակնդէտ, գահավէժ, գրագէտ, հակամէտ, միջադէպ, տօթակէզ...

Նշենք, որ կան մի շարք բառեր, որտեղ է-ն չի հնչյունափոխվում ի ձայնավորի, սակայն արտահայտվում է է տառով՝ աշխէտ, երէց, հելլէն, կրկէս, տէգ, քարտէզ և այլն:

3. Մի շարք ածանցներում ու նրանցով կազմված բառերում Ե-ի փոխարեն միշտ գրվում է է՝

-արէն - յունարէն, չինարէն

-աւէտ - ծաղկաւէտ, բուրաւէտ, արդիւնաւէտ

-եղէն - ակնեղէն, ոսկեղէն

-երէն - հայերէն, պարսկերէն

-էն - արդէն, պարէն

-էք - արժէք, քրօրհնէք

-կէն - ճանճկէն, ծակոտկէն

-պէս - ինչպէս, այսպէս

4. Է-ն անփոփոխ է ածանցական որոշ ձևերում՝

ա) աղէտալի

կրկէսային

պարէտային

չէզոքութիւն

արժէքաւոր

բ) -էս, -էոս, -էլ, -էն և -գէն (կէն)-ով վերջացող անձնանուններում՝

Արիստակէս

Արտաշէս

Աքիլլէս

Յերակլէս

Մովսէս

Յովհաննէս

Ներսէս

Թադէոս

Մատթէոս

Տիմոթէոս

Աբէլ

Անժէլ

Գաբրիէլ

Գնէլ

Դանիէլ

Մանուէլ

Միքայէլ

Ռաֆայէլ

Բաբկէն

Գուրգէն

Աշխէն

Արմէն

Արսէն

Կարէն

Սուրէն

Ռուբէն

Վիգէն

Վազգէն

գ) Որոշ հիմն և արդի տեղանուններում՝

Աթենք Ձեյթուն
Եմեն Մարսել

5. Ամեն արմատը և նրանից կազմված բառերը գրվում են ե-ով՝ ամենարար, ամեներջանիկ, ամենիմաստ, ամենընկալ, բայց ամենայն, ամենեքին, ամենեքեան դերանունները գրվում են գրվում են ե-ով:

6. Եմ պակասավոր բայի հարացուցային ձևերը պետք է հիշել անգիր, որովհետև դրանք նաև ե լծորդության բայերի դիմային վերջավորություններն են:

Սահմանական եղանակի ներկա ժամանակ

եմ եմք
ես էք
է են

Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակ

էի էաք
էիր էիք
էր էին

Ստորադասական եղանակի առաջին ապառնի

իցեմ իցեմք
իցես իցեք
իցէ իցեն

Հրամայական ներկա

- եր - երուք

Ինչպես նշեցինք, ե լծորդության բայերը նույն ժամանակա-ձևերում ստանում են այս պակասավոր բայի դիմային ձևերը որպես վերջավորություն՝ պահպանելով համապատասխան ուղղագրությունը: Օրինակ՝ **յաղթեմ, յաղթես, յաղթէ, յաղթեմք, յաղթեք, յաղթեն, յաղթեի, յաղթեիր, յաղթեր, յաղթեաք, յաղթեիք, յաղթեին** (սահմանական անցյալ անկատար), **յաղթիցեմ, յաղթիցես, յաղթիցէ, յաղթիցեմք, յաղթիցեք, յաղթիցեն** (ստորադասական 1-ին ապառնի), **մի՛ յաղթեր, մի՛ յաղթեք** (արգելական հրամայական):

Վարժություն 1. Տրված բառերում գծիկները փոխարինել է-ե տառերով.

ա) Ակն-րեւ, աղ-տ, արդ-ն, աշխարհաշ-ն, աշխ-տ, ան-ծք, անշ-ջ, ապաւ-ն, ապաք-ն, ապ-րասան, առձ-ռն, ասպ-տ, արալ-զ, արժ-ք, բր-տ, գ-շ, դ-մք, դ-պի, դ-ղ, դ-ղձան, եդ-մ, եթ-ր, եղ-ռն, եղջ-ր-նի, եր-ց, գ-նք, ընկ-ց, թ-և, թ-պ-տ, ժամկ-տ, ժապաւ-ն, լ-զ, խաբ-ութիւն, խ-թ, խ-ժ, խլ-զ, խ-ղ, խ-ղաթիր, ծ-ս, ծովահ-ն, կ-ղծ, կ-ս, կ-տ, կր-տ, հելլ-ն, հ-ռակայ, հիւսկ-ն, հր-շ, ձ-թ, ճ-մ-լ, ճ-մարան, մ-գ, մ-ղու, մ-ղք, մ-կ, մող-ս, յետադ-մ, յ-տոյ, շ-կ, պար-ն, պանթ-ռն, ջրվ-ժ, ս-զ, ս-զ, սպառազ-ն, վ-րայ, վ-ս, վ-րք, տար-ց, տ-զ, տրունական, տ-րտ-ր, տնօր-ն, փոխար-ն, փորձագ-տ, ց-ր-կ, ք-րծէ, քարտ-զ, քր-ական, օր-ն(ք):

բ) Եւ արդ՝ բազում ազգք են թռչնոց, որ ունին զպ-սպ-ս կրպարանս: Եւ -թ- միտ եղեալ հայեսցի ոք ընդ իւրաքանչիւր կարգս նոցա եւ ըստ նմանութեան օրինակի ձկանցն գտան-

զնոսա իւիք իւիք: Եւ թ-պ-տ ամ-նեքին զմի՝ թռչուն անուն ունին, սակայն բազում կ-րպարանս ունին, այլազգ՝ մեծութեամբ եւ կ-րպարանաւք եւ զունաւք եւ բարոյիւք եւ խաղալեաւք եւ գործովք: Եւ անցան-ն ըստ մարդկ-դ-ն պատմութիւն՝ անբաւ յարհնուածովք եւ կ-րպարանաւք իւրեանց: Իսկ ոմանք այնպ-ս հնարեցան, զի ըստ կերպարանացն եւ զանուանս ազգացն նոցա եղին... Նոյնպ-ս եւ անուանքն ընտրեսց-ն ի միմեանց զազգսն ըստ իւրաքանչիւր -րամի, որ միմեանց ինչ ոչ նմանից-ն, եւ ից-ն ատարացեալք ի հասարակաց միաբանութեմէ: Արդ՝ այլ ազգ գիշակ-ր հաւուցն է, քանզի այլակ-րպ կ-րպարանաւք իբրեւ առ ի պ-տս որսոյն պատշաճեալ են մագիլս սուր եւ հաստաբիտ եւ կտուցս կոր եւ սուր եւ խիստ...

Եւ բազում փոփոխմունք գտանին յիւրաքանչիւր յազգս թռչնոց եւ կերպարանաւք, եւ բարոյիւք, եւ բարբառովք: Ձի կ-սքն խորամանկք են, եւ կ-սքն բարբառովք են, եւ կ-սքն՝ անբարբառք, կ-սքն գ-ղեցկածայնք են եւ քաղցրաբարբառք, եւ կ-սքն՝ խստածայնք եւ տգ-ղաբարբառք...

Աքաղաղ հպարտ է եւ ս-գ, սիրամարգ զարդաս-ր է եւ պայծառաթ-ւ, աղաւնի ցանկաս-ր է հանապազ ամուսնանալովն՝ հանդ-րծ ընտանի թռչնով, զի եւ նա միշտ ամուսնանայ: Կաքաւ ն-նգաւոր է եւ խորամանկ, եւ նախանձոտ, եւ հնարագ-տ, եւ որ-սորդախաբ: Եւ որպ-ս ասացաք, բազում իրք եւ բարք գտանին ի բնութիւնս իւրաքանչիւր ազգ թռչնոցն:

Վարժություն 3. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրությամբ:

Ամեհի, ամենագոր, անեզր, արժեք, ափսե, բզեզ, գետեզր, գեշ, գուցե, դեզերել, դեղձան, դեղնախունկ, եթե, եղերամայր, եղջերաբույս, եղջերու, ընդդեմ, ընթերակա, թել, լեռնական, լերկ, խեցեմորթ, կես, կետ, հայերեն, հետադեմ, հավետ, հարմարավետ, հերյուն, հեն, հյուսկեն, ձեթ, մեջ, միջօրե, մրգավետ, նվեր, շեն, պատվեր, պարսկերեն, սերմ, սեգ, սեր, սպառազեն, վերջակետ, վեժ, վեմ, վրեժ, տերություն, տնօրեն, տնօրհներք, քերթող, քեն:

Յ/Յ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բառասկզբի յ-ն միշտ արտասանվում է **հ՝ յաղթել, յղել, յիշել, յարկ, յովազ** և այլն: **Յ**-ով սկսվող բառերի ուղղագրությունը պահպանվում է դրանցով կազմված բաղադրություններում՝ **ան-յաղթ, անյազ, անյաջող, սրտայօժար**: Հստակ կանոն գոյություն չունի, թե ինչու որոշ արմատներ պետք է գրվեն յ-ով, այլք՝ **հ**-ով:

Հարկ է նշել միայն, որ դ-ից առաջ լսվող **հ**-ն միշտ գրվում է **յ՝ յղել, յղկել, յղփանալ**, ինչպես նաև՝ ի նախդիրը ձայնավորով սկսվող բառերից առաջ հնչյունափոխվում և դառնում է **յ**, որը գրվում է բառին կից՝ արտասանվելով **հ՝ յանձին, յանձինս, յաւելեալ, յօզուտ, յուրախութիւն, յանուն, յետ, յուղարկաւորութիւն** և այլն: **Յ**-ով են գրվում այն բոլոր բառերը, որոնք կազմված են այս ի նախդրի միջոցով՝ **յանձնաժողով, յաջող, յառաջ, յարդարել, յարձակել, յետագայ, յետնորդ, յուշ, յօղուած, յօղակապ** և այլն:

Որպես օրինաչափություն՝ **հ**-ով են գրվում պարսկերենից փոխառված արմատները՝ **հազար, հարիր, հարազատ, հարուստ, հրաման, հրապարակ, հրեշտակ** և այլն: **Յ**-ով են գրվում նաև փոխառյալ ամսանունները՝ **յունիս, յուլիս, յունուար**: Մեկ այլ օրինաչափությամբ՝ եթե վանի, Խոյի և Բայազետի բարբառներում տվյալ բառն իր բառասկզբի **հ** հնչյունը վերածել է **խ**-ի, ապա դասական ուղղագրությամբ այն պետք է գրվի **հ**-ով, օրինակ՝ **հաց-խաց, հայ-խայ, հայր-խէր** և այլն: Սակայն այս բոլորը մասնավոր բնույթի ստուգաբանական դիտարկումներ են՝ զգալի բացառություններով: Ըստ ՆՅԲ տվյալների՝ **հ**-ով սկսվող բառերը գերազանցում են յ-ով սկսվողներին: Ուրեմն պետք է ցանկերով անգիր հիշել այդ բառերը: **Յ**-ով գրվող արմատները բառաբարդման և ածանցման դեպքում պարտադիր պահպանում են իրենց ուղղագրությունը՝ **յայտնի-անյայտ, յայտնել, յայտնապէս, յայտնութիւն** և այլն:

1. ա) **Յ**-ով սկսվող բառեր՝

յագեցնալ	յարդ	յոյգ
յագել	յարկ- ծածկ	յոյժ
յախճապակեայ	յարմար	յոյլ
յախուռն	յարութիւն	յոյն
յածանալ	յարուցանել	յոյս
յակինք	յաւակնել	յոպոպ
յաղագս	յաւերժ	յոռի
յաղթ	յաւետ	յովագ
յաճախ	յափշտակել	յովատակ
յամառ	յեղ	յորդ
յամենալ	յեղուկ	յորձանք
յամապր	յենք	յորջորջել
յայտնի	յեսան	յուզել
յանգ/յանկ	յերիւրանք	յուլիս
յանդգնել	յիմար	յունապ
յանդիման	յիշել	յունիս
յանկարծ	յիսուն	յունուար
յանցանք	յիրաւի	յուռթի
յաշտ	յղանալ	յուռութք
յապաղել	յղել	յստակ
յապաւել	յղի	յօժար
յառել	յղկել	յօյնք
յառնել	յղփանալ	յօշել
յասմիկ	յո	յօրայ
յասպիս	յորելեան	յօրանջ
յատակ	յոգնել	յօրինել
յատուկ	յոլով	
յար- նախածանց	յոխորտալ	
է, կից իմաստով	յողոզող	

Յ-ով են գրվում մի շարք անձնանուններ (դրանցից ստեղծված ազգանունները ևս) և տեղանուններ՝ Յաբեթ, Յակոբ, Յասմիկ, Յարութիւն, Յիսուս, Յոբ, Յովակիմ, Յովասափ, Յովհաննէս,

Յովնան, Յովսէփ, Յուդա, Յուլիանոս, Յուլիոս, Յուսիկ, Յորդանան, Յունաստան-Յոյնք :

2. Բառավերջում յ-ն գրվում է ա և ո ձայնավորներից հետո: Այս կանոնին իր բացառություններով առավել մանրամասն կանդրադառնանք երկբարբառների բաժնում՝ այ և ոյ:

Վարժություն 1. Տրված բառերում գծիկները փոխարինել յ, հ տառերով:

- ա) -ամառ, -անձնել, -արդ, -եռակա-, -ապաղել, -աջորդաբար, -ատակագիծ, -աւաքածո-, -աւետ, -որդ, -ուշիկ, -ուշամատեան, բարձրաւճո-, -ազարամեա-, -ելլենագիր, -ուսա-ատ, -ուսաբեկ, ան-ագուրդ, ան-ագ, -ագեցում, -եծելագօր, -եկեկալ, -եղգ, -աղթանդամ, -աղթա-ասակ, -եղինակ, -եղծամահ լինել, -եղծնուլ, -անցապարտ, -անցագործ, ան-ա-տանալ, -եղո-ս, -եղուլ, -եղուսել, -եշտին, -եռագնաց, -եռաւոր, -ետախո-զ, -դի, -դկել, -ոգնել, -ոռի, -ոռետեսութիւն, -ուզական, ան-ո-զ, -ուզիչ, -ուզմունք, -ետամուտ, -ետազօտութիւն, -ետաքրքիր, մտա-ո-զ, -ործանուտ, -ուլիսեան, -իմն, -իւսկէն, ան-ստակ, -ստակել, -ստակութիւն, -օրինուածք, -ոգեղէն, -ոկտեմբեր, -օրինել, -ոլանի, -ողածին, -րաշալի:

բ) Խոր-ուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր -ա-տմեցաւ. -ովիւքն երգեն ընդ -րեշտակս, տան աւետիս աշխար-ի: Ծնաւ նոր արքա-, ի Բեթղե-էմ քաղաքի. որդի՛ք մարդկան, օր-նեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի եւ երկրի ի խան-ծարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի -օրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետօք. եւ արարածք ամենայն զգեցան -անդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծո-. եւ -րեղինաց բազմեցաւ:

մութիւնք յերկնից յերկիր վայր իջեալ: Այսօր -ովուացն տեսեալ զարդարութեան արեգակն եւ ընդ -րեշտակս երգէին փառք ի բարծունս Աստուծոյ:

Որ անտես անքնին քառակերպիցն վե-ագոյն, ի փրկել զմեզ եկեալ անմահից թագաւորն, օր-նութիւն առաքողին: Առաքի -րեշտակապետն առ սերովքէն -ողողէն. ասէ տէրն եւ արարողն առաքեալն ի -օրէ մարմնանայ ի քէն փրկողն: Մկրտի ի

-որդանան վկայելով Յօր եւ Յոգւոյն. ովսաննա ի բարծունս երգէին մանկունքն օր-նութիւն որդւոյ Դաւթի:

Ձի -աւիտենից խորտակեցեր զլուծ քո...զի արհամարհեցեր -ոյժ կրկնել զճանապարհս քո, զի մերժեաց Տէր զ-ոյս քո, եւ ոչ եւս աջողեսցիս ի նմա:

Վարժութիւն 3. Արևելահայերեն բառածևը փոխարկել դասական ուղղագրութեան:

Աշխարհ, անհանգիստ, անհարթ, անհավասար, անհնա-զանդ, անհնարին, անհագ, անհայտ, անհատակ, անհարմար, անհիշաչար, անհիշատակ, անհույս, բեհեզ, բեհեզյա, գրավա-հարկ, դյուրահավատ, թերահավատ, հայկասիրտ, հայր, հանդես, հայտնի, համբույր, հանցանք, հապճեպ, հավիտյան, հոգի, հո-գեղեն, հովազ, հովազառնուծ, հովատակ, հորդառատ, հորջորջել, հուղարկավոր, հուշկապարիկ, հովանի, հովիվ, հրաշագործ, հրածին, հրապարակախոս, հրավիրել, ընդհանուր, հրեշտակ, մահ, նահատակ, ներհակ, շահեկան, շնորհագարդ, շնչահեղծ, շրջահայաց, ողջախոհ, ոսկեհանդերձ, վաղահաս, վահանակ, քարահարկ, քմահաճ:

ՈՒՒՎ ՅԵՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դասական հայերենում վ հնչյունը ունի երեք գիր՝ ու, ւ, վ: Ու-ն արտասանվում է վ բառամիջում՝ ձայնավորից առաջ՝ **արուեստ, հատուած, նուիրական, պատուէր:** Իսկ ու խոնարհման բայերի անցյալ անկատար ժամանակածներում այն արտասան-վում է պարզապես ու՝ **հեղուի, հեղուիր, հեղուաք, հեղուիք, հեղուիւն:**

Բառասկզբում արտասանվող վ-ն գրվում է վ՝ վարժ, վեր, վիրաւոր, վրէպ: Վ-ով սկսվող բառերի սկզբնագիր վ-ն պահ-պանվում է բարդութեան և ածանցման մեջ՝ **անվարժ, աստուա-ծավախ, արքայավայել:** Բառասկզբում երբեք ւ-ն չի գրվում:

Երկու ձայնավորների միջև և բառավերջում՝ ա, ե, ի ձայ-նավորներից հետո արտասանվող վ հնչյունը գրվում է ւ տառով՝ **աւագանի, յաւէտ, տաւիղ. անձրեւ, գաւ, ազնիւ:** Ի-ը գրվում է նաև -**աւէտ, -աւոր** ածանցներում՝ **թագաւոր, լուսաւոր, ծաղկաւէտ:**

Ու-ից առաջ լսվող վ-ն գրվում է ւ, ու-ից հետո՝ վ տառով՝ **այգւոյ, հոգւոյ, բովանդակ, սով:**

Վարժութիւն 1. Տրված բառերում գծիկները փոխարինել ու, ւ, վ տառերով:

ա) Ա-ագ, ա-ետել, ա-ագակ, ա-ագան, ա-անդական, ա-անդառու, ա-ելորդ, ա-ետարան, ա-ետարանիչ, արտաս-ել, ան-արան, ան-երադարձ, ան-նաս, նախա-կայ, բե-եկն (խէժ, իւղ), բ-էճ, գա-ագան, գա-աթ, գա-առ, դա-անել, զին-որ, զին-որական, թի-, թ-ական, կա-, կառա-արել, կորո-ի, կռ-ել, հատ-ած, հա-ասար, հա-աստի, հո-անա-որ, հրա-առ, հրա-իրել, ձիա-արժ, ձիարշա-, ձ-ածե-, ճի-աղ, ճռ-ողել, մեղ-ագործ, մեղ-ակն, մեղ-անոց, յա-ակնել, յա-ել-ած, յօդ-ած, Նա-ակատիք, նա-ապետ, ն-ագարան, ն-ագել, ն-աճել, ն-իրական, ն-իրեալ, -անատուր, -արագոյր, պատի-, պատ-ական, պատ-աստ, պատ-ար, պատ-իրան, սակա-ապէտ, սակրա-որ, սո-որական, ս-ին, ստաց-ած, -ագրակերպ, -իշապ, -րէժիմնիք, ցա-ակցել, ցր-ել, փառա-որ:

բ) Եւ Մո-սէս արածէր զխաշինս Յոթորայ աներոյ իւրոյ՝ քրմին Մադիանաց-ոց, եւ ած զխաշինս յանապատ եւ եկն ի լեռնն Աստուծոյ ի Քորեբ: Եւ երե-եցա- նմա հրեշտակ Տեառն բոցո- հրոյ ի միջոյ մորեն-ոյ: Եւ ասէ Մո-սէս. «Անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ. զի՞ է զի ոչ այրիցի մորենին»: Իբրեւ ետես Տէր, եթէ մերձենայ տեսանել, կոչեաց զնա Տէր ի միջոյ մորեն-ոյն, ասէ. «Մո-սէ՛ս, Մո-սէ՛ս». եւ նա. սէ. «Զի՞ է»: Եւ ասէ. «Մի՛ մեր- ձենայր այսր. լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ, յորում կայ դու ի դմա, երկիր սուրբ է»: Եւ ասէ ցնա. «Ես եմ Աստ-ած հօր քո, Աստ-ած Աբրահամու եւ Աստ-ած Իսահակայ եւ Աստ-ած Յակոբայ»...

Եւ ասէ Տէր ցՄովսէս. «Տեսանելո- տեսի զչարչարանս ժողո- րդեան իմոյ, որ յեգիպտոս, եւ լ-այ աղաղակի նոցա ի գործա- արացն իւրեանց, զի զհտեն զ-իշտս նոցա. եւ իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտաց-ոցն, եւ հանել զնոսա յերկրէն յայնմանէ, եւ տանել զնոսա յերկիր բարի եւ յընդարձակ, յերկիր, որ բոխտ զկաթն եւ զմեղր, յերկիրն Քանանաց-ոց եւ Քետաց-ոց եւ Ամո- րիաց-ոց եւ Փերեզաց-ոց...»:

Վարժութիւն 3. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրության:

Աստված, անվանել, անվարժ, անվրեպ, բավիղ, բովարան, բովել, բվեճ, գավառ, գերեվարել, դավ, դավաճան, դարավանդ, դեվ, Դվին, երկվորյակ, եղևնի, զով, զովանալ, զվարթ, զվար- ճալի, թավ, թեթև, թշվառ, թվական, ժապավեն, ժողովել, ինքնա- բավ, լավագույն, լավատես, լեզվագար, լեզվաբանություն, լու- սավոր, լվանալ, խարդավանք, խավարամած, խավարտ, խոնավ, խռովարար, ծավի, ծովացուլ, կավածեփ, կավեղեն, կռվել, հա- վանաբար, հավատարիմ, հունվար, հրվանդան, ձվածև, ձվարան, ճգնավոր, ճիվաղ, ճիվաղաբարո, մեղվաբույծ, նավավար, նվա- գարան, նվաճել, շավիղ, շիվ, պատվավոր, ջրվեժ, սևաթույր, տավիղ:

Վարժութիւն 4. Գրել յոթական բառ, որտեղ վ հնչյունը արտահայտվում է՝ ա) և տառանշանով, բ) ու տառանշանով, գ) վ տառանշանով:

Վարժութիւն 5. Գրել յոթական բառ դասական ուղղա- գրությամբ, որոնք սկսվում են յ և հ տառերով, և որոնք բառա- միջում գրվում են յոթերորդ է-ով:

Վարժութիւն 6. Տրված բառերում գծիկները փոխարինել է- ե, ու, ւ, վ, յ, հ տառերով:

ա) Արե-, ա-ազանի, այդպ-ս, Աստ-ած, արքա-, արեղա-, ան-արժ, բա-իղ, բ-էճ, բր-տ, գա-իթ, գ-շ, գ-ս, գ-տ, գրագ-տ, գր-թ-, գուց-, դա-, դ-ւ, դ-զ, դ-մ, դ-պ, դժ-ար, ել-ւ-ջ, երբեւ-, եր-, եր-ց, եր- խա-, եր-կո-, զանգ-ած, գ-ն, զին-որ, ընդամ-նը, ընծա-, թագա-որ, թ-մ, թե-, թ-, թ-ական, ժան-ար, ժողո-, ինչպ-ս, լա-, լ-զ, խա-, խա- ար, խ-նթ, խ-թ, ծաղկաւ-տ, ծ-ս, ծ-էն, կաթ-ած, կա-իճ, կ-մ, կ-րոն, կ-զ, կ-ս, կ-տ, կիրակ-, հաճո-, հա-, հաշի-, հաշ-ել, հասց-, հա- ատ, հ-զ-լ, հ-ն, հայ-ր-ն, հի-անդ, հո-ի-, ձ-ղուն, ձ-թ, ղ-կ, ճա-, ճ-մ, ճի-աղ, մանր-, մ-զ, մ-ջ, մ-տ, միթ-, մրգա-էտ, յազ-լ, -աղթ, -ամր, - ա-տնի, -անդ-պ, -անցանք, -իշել, -ունար-ն, -ունիս, -ունուար, -օդ- ած, Նա-ասարդ, նա-թ, ն-կտար, նժդ-հ, ն-էր, ն-աճել, շահ-ն, շա- իղ, ո-, որպ-ս, չ-ան, չ-առ, պատի-, պատճ-ն, պատն-շ, պարսկ-ր-ն, պարտ-զ, պ-տ, պ-ս, ջ-րմ, ջրօրհն-ք, ս-զ, ս-ր, ս-ին, սք-մ, -աղի-, - երա-, -եց, -էմ, -կա-, -արժութիւն, տա-իղ, տ-ր, թոպ-, ց-ց, փայտաշ-ն, փառաս-ր, փեսա-, փ-ր-զակ, քահանա-, քարտ-զ, ք-ն, օրա-ուր, օր-ն:

բ) -արսնն աս-. «Սեա- եմ ես եւ գեղեցիկ, դստերք Երուսաղեմի, իբրե- զ-րանս Կեդարու, եւ իբրե- զխորանն Սողոմոնի: Մի՛ -այիք ընդ իս, զի ես սե-ացեալ թխացա-, քանզի խեթի- -այեցա- ընդ իս արեգակն. որդիք մօր իմ- մարտեան ընդ իս, եւ եղին զիս պա-ապան այգեստանի. զի զայգին իմ ոչ պա- եցի»:

-արսնն ցփեսա-ն աս- «Պատմեա ինձ զոր սիրեաց անձն իմ. ու՞ր հո--ես, ու՞ր -անգուցանես ի միջօր-ի. գուց- լինիցիմ իբրե- զընկեցեալն -երամակս ընկերաց քոց»:

Փեսա-ն ցհարսնն աս-. «Եթ- ոչ ծանիցես զանձն քո, գ-ղ- ցիկդ ի կանա-ս, ել դու գ-ետ գարշապարացն -օտից, եւ արածեա զուլս քո ի -րանս -ո--աց: Երի-արացն իմոց ի կառսն Փարա-ոնի նմանեցուցի զքեզ, մերձա-որդ իմ...»:

Փեսա-ն ցիւր անձնն եւ ց-արսնն ասէ. «Ես ծաղիկ դաշտաց, շուշան -ո-տաց: Իբրե- շուշան ի մ-ջ փշոց, այնպ-ս մերձա-որդ իմ ի մ-ջ դատերաց»:

-արսնն ցփեսա-ն աս-. «Իբրե- խնձորի ի փա-տս անտառի, այնպ-ս եղբորորդին իմ ի մ-ջ ուստերաց. ընդ -ո-անեա- նորա ցանկացա- նստել եւ նստա-, եւ պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմում»: Յօրհորդսն -արսնն աս-. «Մութ-ք զիս ի տուն զին-ո-, կարգ-ց-ք ի վերա- իմ զս-ր, -աստատ-ց-ք զիս իւղո-, կուտ-ց-ք -իս խնձոր, զի խանդակաթ եմ ես սիրո-: Ձախ նորա ընդ գլխո- իմո-, եւ աջ նորա պատ-սց- զինե-»:

ԳՐԱԲԱՐԻ ԵՐԿԲԱՐՔԱՆԵՐԻ ԵՒ ԵՆԱԲԱՐՔԱՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարն ունեցել է երկբարբառներ և եռաբարբառներ, որոնք պատմական հնչյունափոխության արդյունքում ձեռք են բերել արտասանական և ուղղագրական որոշ առանձնահատկություններ: Հիշենք դրանցից ամենակարևորները:

Գրաբարն ունեցել է հետևյալ երկբարբառները՝

Այ- այր, եղբայր, մայր

Աւ - աղաւթք, արաւտ, ծնաւտ

Եա - ահեակ, դղեակ, մատեան

Եւ - առեւծ, բեր, գելդ

Իւ - արիւն, անկիւն, իւղ

Ոյ - բոյս, գոյն, լոյս

Իո – բիւզանդացւոց, հոգւոց, ոգւով:

Եռաբարբառներն են՝

Եայ- հրեայք, փախստեայք, քրիստոնեայք
Եաւ – ընտանեաւ, եկեղեցեաւ, թշնամեաւ
Իոյ – որդւոյն, ոգւոյս, հոգւոյդ
Իայ- միայն (միակ բառն է այս եռաբարբառով)

ԱՒ ԵՐԿԲԱՐՔԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս երկբարբառը գրաբարի հնագույն երկբարբառներից էր, որը փակ վանկուն բաղաձայնից առաջ, պարզեցվել է և վերածվել պարզ **օ** ձայնավորի: Այս պատմական հնչյունափոխությունը կատարվել է դեռևս 10-րդարի սկզբից, սակայն դրա ուղղագրական ամրակայումը փոխառյալ **օ** տառով տեղի է ունեցել ավելի ուշ՝ 12-րդ դարից:

Այսպիսով, աւ երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է **օ** տառ, բացառություն են կազմում աղաւնի և նաւթ բառերը, որոնց մեջ, ենթադրաբար, լ-ից հետո արտասանվել է ը ձայնավորը, որն էլ խանգարել է երկբարբառի պարզեցմանը: Բացի այս բառերից՝ **աւ** հնչյունակապակցությունը պահպանում է իր գրային արտասանությունը հետևյալ դեպքերում՝ 1) բառն ավարտվում է **աւ-ով**, և նրան հաջորդում են **-ք** կամ **-ս** հոգնակերտները, և 2) բառին ավելանում են **-ս**, **-դ**, **-ն** հոդերը: Երկու դեպքում էլ առկա է գաղտնավանկ ը-ի ազդեցությունը, և բառապատկերը պահպանվում է, ինչպես գրում ենք, այնպես էլ պետք է կարդանք: Օրինակ՝ **կաքաւ-** **կաքաւք**, **կաքաւս**, **կաքաւդ**, **կաքաւն**, **կաւ-** **կաւք**, **կաւս**, **կաւդ**, **կաւն** կամ **խաւ – խաւք**, **խաւս**, **-խաւդ**, **խաւն** և այլն:

Քանի որ չկա կանոն, ըստ որի կտարբերակվեն բառամիջում **աւ/օ** գրվող բառերը **ո-ով** գրվողներից, պետք է մտապահել և յուրացնել բառացանկը: Նշենք, որ դասական ուղղագրությունը պահպանած արևմտահայերենում **աւ** երկբարբառը ջընջված է, և նման բոլոր բառերը գրվում են **օ** տառով:

Այժմ ներկայացնենք բառամիջում **օ** ունեցող բառերի հիմնացանկը: Բերված բառերը բառաբարդման և ածանցման դեպ-

քում, պարզ է, պահպանում են իրենց ուղղագրությունը: Օրինակ՝
ակօս-ակօսել, անակօս կամ լօշ-լօշտակ, մօտ-մօտակայ, մօտաւոր, յոդ- յոդուած և այլն:

Ակօս	լօշ	Մօրիկ
աղօթք	լօռ	մօրու(ք)
աղօտ	խօթ	յօգուտ
աղօրիք	խօլ	յօդ
ամօթ	խօշիւն	յօժար
անօթի	խօս	յօնք
ապարօշ	ծանօթ	յօշել
առաւօտ	ծղօտ	յօտել
արտօնեալ	ծնօտ	յօրանջ
արտօսր	կարօտ	նարօտ
արօս	կրօն	նօթ
արօտ	կօշիկ	նօսր
արօր	համառօտ	նօտար
բօթ	հետազօտել	նօտր
գողօն	հզօր	շօշափել
գործօն	հօտ	պաշտօն
գօս	<i>(կենդանիների</i>	պարեգօտ
գօտի	<i>խումբ),</i>	պռօշ
դրօշ	<i>բուրմուկը հոտը</i>	Պօղոս
եօթն	<i>գրվում է n-ով</i>	սօթ
զարթօնք	հօրան	սօլ
զբօսանք	հօրոտ	սօսափիւն
զօղել	հօրեղբայր	սօսի
զօծել	հօրու	վառօդ
զօր	ծօն	տօթ
թօզ	ղօղանջ	տօն
թօթափել	ղօղել	ցօղ
թօթով	ճօճ	ցօղուն
թօն	ճօշ	քօղ
թօշնել	մօտ	քօշ
լօղիկ	մօր	օրօր
լօլիկ	մօրաքոյր	

Պետք է հիշել նաև այն ածանցները, կամ հոլովական վերջավորությունները, որոնք ունեն բառամիջի աւ/օ գրածը՝

- առօտ**՝ համառօտ, կարճառօտ
 - **օն**՝ գործօն, գողօն, կտրօն
 - **օնք**՝ զարթօնք, Տրօնք
 - **օրէն**՝ քաջօրէն, հպարտօրէն, գեղօրէն
 - **օք**՝ հիմնականում հոգնակի գործիականն է ի-ա խառն հոլովումների դեպքում՝ խելօք, առօք-փառօք, իրօք...
 - **եօք**՝ հոգնակի գործիականն է ո-ա խառն հոլովման դեպքում՝ եկեղեցեալք / եկեղեցեօք, թշնամեալք / թշնամեօք
- Կան բառեր, որոնց սեռական-տրականը գրվում է **աւ / օ**, այստեղից էլ սեռականաձև հիմքից բառաբարդմամբ կազմված բառերի ուղղագրությունը՝ **հայր- հաւր / հօր, հօրեղբայր, հօրեղբօրորդի, մայր- մաւր/մօր, մօրաքոյր, եղբայր- եղբաւր/եղբօր, եղբօրորդի**: Ե-ից հետո լսվող **օ** հնչյունը գրվում է **օ՝** արդեօք, եօթն, եկեղեցեօք և այլն:

Այս գրաբարյան կանոնը, սակայն, չի գործում նոր փոխառված բառերի դեպքում, այսպես՝ **եղ, Նիւ Եորք, Քեթթահիա** և այլն:

Օ-ի փոխարեն **ո** է գրվում հետևյալ բառերում՝ ովսաննայ, ովկիանոս, ոլիմպիական, ովազիս, Ոսրոյնէ, Ովսէ:

Վարժություն 1. Տրված բառերում և տեքստում գծիկները փոխարինել **օ** կամ **ո** տառերով:

- ա)** ակ-ս, աղ-րիք, ան-թի, ան-սր, ապար-շ, առ-ք - փառ-ք, ար-ր, արտ-սր, ար-տ, արտ-նել, բ-թ, գեղ-րէն, գ-րծ-ն, գ-ղ-ն, դ-դ-շ, ե-թն, զարթ-նք, ընտանե-ք, թշնամե-ք, թ-թուել, թ-թափել, իր-ք, լ-լիկ, խել-ք, ծան-թ, կարծե-ք, կր-ն, կտր-ն, կ-շիկ, պաշտ-ն, թ-շնել, լ-շտակ, համառ-տ, ճ-ճել, մ-րաքոյր, Մ-րիկ, մ-րուք, յօշել, յ-տ, յ-դուած, յ-դ, նար-տ, -սաննայ, -լիմպիական, -վկիանոս, պարեգ-տ, Պ-ղոս, Պռ-շ, ս-սի, սք-ղել, ս-սափյուն, վառ-դ, Տր-նք, ց-ղուն, քաջ-րէն, ք-ղ, -ր-րոց:

բ) Տէր, ոչ ոք է նման քեզ, եւ ոչ զոյ բաց ի քէն, ըստ ամենայնի զ-րս լուաք ականջ-ք մեր-վք: ...Եւ արդ, տէր, բանն զ-ր խսեցար ընդ ծառայի քուն եւ յաղագս տան նորա, հաւատարիմ լիցի մինչեւ յաւիտեան... Վասն զի դու, տէր, բացեր զունկն ծառայի քո շինել քեզ տուն. յաղագս այսորիկ եգիտ ծառայ քո կալ յաղ-թս առաջի քո:

Եւ առ Անան զծառայսն Դաւթի, եգերծ զնոսա, եւ եհատ զդր-շակսն նոցա զհասարակածն մինչեւ վեր եւ արձակեաց զնոսա: Եւ եկին պատմել Դաւթի վասն արանցն. առաքեաց ընդ առաջ նոցա, վասն զի էին ամաչեցեալք յոյժ. եւ ասէ արքայ, նստարուք յերիքով մինչեւ աճեսցեն մ-րուք ձեր եւ ասպ եկեսջիք: Եւ տեսին որդիքն Ամոնայ թէ ամաչեաց զ-րն Դաւթայ: Լուաւ Դաւիթ, եւ առաքեաց զՅովաբ եւ զգունդն զ-րաւորացն:

Վարժութիւն 2. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրութեան:

Ամոթ, առավոտ, արտոնյալ, բոթաբեր, գոս, գոտի, դրոշ, զբոսանք, զօժել, զորք թափոն, թափոր, թոշնել, խոսել, ծանոթութիւն, ծղոտ, կարճառոտ, կրոն, հզոր, հոնք, հորեղբայր, ձոնել, մորաքույր, հպարտորեն, հոժար, հոտել, հոտաղ, հորան, հորոտ, նոտար, նոտրգիր, պաշտոնյա, Պողոսյան, ջարդոն, սոլ, տոնացոյց, տոնական, քողարկել:

ԵՎ ԵՐԿԲԱՐԲԱՌԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եա երկբարբառն արդի հայերենում վերափոխվել է **յա** երկհնչյունի, այսինքն՝ արդի հայերենում **յա** երկհնչյունով գրվող բոլոր բառերն ավանդական ուղղագրությամբ գրվում են **եա** երկբարբառով: Օրինակ՝ **ահեակ, ատեան, անցեալ, Դիմաքսեան, դղեակ, լեամն, մատեան, մեհեան** և այլն: **Եա** երկբարբառով են գրվում նաև գրաբարյան ա ներքին հոլովման որոշ բառերի

սեռական-տրական հոլովածները, ո-ա խառն հոլովման բառերի հոգնակի սեռական տրականը, ներգործածն խոնարհման սահմանական անցյալ -կատարյալի եզակի 3-րդ դեմքի բայածները, ինչպես նաև բուն հրամայականի եզակի ձևերը՝ **սիւն-սեան, արիւն-արեան, չարութիւն-չարութեան, հանգիստ-հանգստեան, ծնունդ- ծննդեան, իւր-իրեանց, թշնամի-թշնամեաց, սիրելի-սիրելեաց, առաքել-առաքեաց, սիրել-սիրեաց, մխիթարել-մխիթարեաց, առաքեա՛, սիրեա՛, մխիթարեա՛:**

Պետք է հիշել, որ եթե ա-ին և ո-ին հաջորդում է եա երկբարբառը, ապա նրանց միջև գրվում է յ: Օրինակ՝ **ախոյեան, հայեացք, կայեան, դայեակ, Գայեան/Գայիան, Հմայեակ, Աղայեան, Սարոյեան, Գալոյեան*** և այլն:

Վարժութիւն 1. Տրված տեքստում գծիկները փոխարինել **եա** երկբարբառով:

բ) Այսպէս ասէ՝ Տէր՝ Ընտր- քեզ կամ երիս ամս սովոյ, կամ գերիս ամիսս փախչել քեզ յերեսաց թշնամ-ց քոց, կամ գերիս աւուրս սուր տ-ռն եւ մահ յերկրի քում, եւ հրեշտակ տ-ռն սատակեսցէ յամենայն ժառանգութիւնս Իսրայելի. եւ արդ տես զինչ բան տաց պատասախանի որ առաք-ցն զիս: ...Ամբարծ Դաւիթ աչս իւր եւ ետես զհրեշտակ տ-ռն, զի կայր ի մէջ երկնի եւ երկրի, եւ սուրն իւր ձգ-լ ի ձեռին իւրում, եւ կարկառ-լ ի վերայ Երուսաղեմի, եւ անկան Դաւիթ եւ ծերքն զգեց-լ քուրծս ի վերայ երեսաց իւր-նց:

Այլ դուք թողէք զիս եւ մոռացարուք զլ-ռն սրբութ-ն իմոյ եւ կազմէիք զդիւաց սեղան...

Վարժութիւն 2. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրութեան:

Ախոյան, անիծյալ, առաքյալ, Արտաշիսյան, արեւմտյան, արյան, բարյալ, Գայանե, դանայան, եղյամ, երդվյալ, ժանյակ, լռելյայն, լուսնյակ, կյանք, կորեակ, հավիտյան, հեծյալ, Հմայակ,

* Այստեղ էլ > է հնչյունափոխություն ունենք:

Չովհաննիսյան, ձյան, մանյակ, մեռյալ, Մովսիսյան, չարյաց նվազագույն, պատյան, սառուցյալ, սենյակ, սիրեցյալ, սիրյալ, սյան, տասնյակ, տվնջյան, Տյառնընդառաջ, տվյալ, որդյակ, ցկյանս, ցորյան:

ԵՒ/Ի ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի պատմական զարգացման ընթացքում **եւ** երկբարբառի արտասանությունը նույնացել է **իւ** երկբարբառի հետ, երկուսն էլ արտասանվում են որպես **յու** երկհնչյուն: Գրաբարում **յու** երկհնչյունն ունեցող բոլոր բառերը և բառաձևերը գրվում են **իւ** երկբարբառով, որոշ բառերում հնարավոր է գուգածել գրություն՝ **և՛ իւ, և՛ եւ** տարբերակներով, բայց բոլոր դեպքերում հնարավոր է **իւ**-ով գրությունը: Դասական ուղղագրության ժամանակակից տարբերակում **եւ** երկբարբառը վերացել է, և **յու**-ով հնչվող բոլոր բառերը գրվում են միայն **իւ** երկբարբառով: Օրինակ՝ **անկիւն, աղբիւր-աղբեր, բիւր-բեր, գիւղ- գեւղ, եղջիւր-եղջեր, իւր, իւրաքանչիւր, իւրովի, իւրովսանն, հարիւր/հարեր, հիւլէ, զօրութիւն, ծիւն** և այլն:

Վարժություն 1. Տրված բառերում և տեքստում գծիկները փոխարինել **իւ** երկբարբառով:

ա) ար-նալի, աղբ-ր, աղ-ս, անկ-ն, առ-ծ, բ-րաւոր, գ-տ, գ-ղատէր, դ-թել, դ-րութ-ն, եղջ-ր, թ-րիմացութ-ն, թնդ-ն, -ղաբեր, -րաքանչ-ր, խ-ս, ծուլութ-ն, կոր-ն, կրթութ-ն, հ-լէ, հ-սիսային, հնչ-ն, ճ-դ, մ-ս, յիմարութ-ն, ն-թ:

բ) **եւ** փրկութ-ն եղել ինձ բազուկ ին, **եւ** սրտմտութ-ն եղել ինձ ձեռնտու... Ձողորմութ-նս Տեառն յիշեցից, զքաջութ-ն Տեառն յուշ արարից:

Ձուր հարի զորդիսն ձեր, **եւ** խրատ դուք ոչ ընկալարութ. սուր եկեր զմարգարեսն ձեր, իբրեւ զառ-ծ սատակէր **եւ** ոչ զարհուրեցարութ:

...Ձի անիրաւեցան ի ճանապարհս –րեանց **եւ** մոռացան զԱստուած Սուրբն՝ -րեանց: **եւ** ամօթ մաշեաց զվաստակս հարցն մերոց ի մանկութենէ -րեանց, զխաշինս նոցա **եւ** զանդեայս, **եւ** զուստերս **եւ** դստերս -րեանց:

Այսպէս ամենայն հ-սն **եւ** ճարտարապետ, որ դրօշեն քանդակեալ պատկերս **եւ** ստեղծանեն կերպարանս՝ միտք –ր տացէ նմանութ-ն պատկերի, **եւ** տքնութ-ն –ր գործ կատարէ:

Ձայս տրտնջեցին երկ-դածքն Տեառն –րաքանչ-ր ընդ ընկերի –րում **եւ** անսաց Տէր **եւ** լուաւ Տէր:

Վարժություն 2. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրությամբ:

Անկյունավոր, արնագույն, Բյուրական, գյուտարար, գոչյուն, եղջյուրավոր, թերություն, հիշողություն, ձյութ, ձյունամորիկ, հյութաբեր, հյութատոս, հյուղակ, հյուրասեր, յուղ, յուրովսանն, յուրային, յուրահատուկ, նյութամոլություն, մյուռոն, սյունաշար:

ԱՅ/ՈՅ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դասական ուղղագրության կանոնների համաձայն՝ բառավերջում **ա** և **ո** հնչյուններից հետո պետք է գրել չարտասանվող **յ**: Այսպես՝ **արքայ, երեխայ, ծառայ, երեկոյ, բրածոյ, մերձենայ, անսայ, Անակայ, Աստուծոյ, Վանայ, յուսոյ, լուսոյ, ի վերայ** և այլն:

Այս կանոնն ունի կարևոր բացառություններ՝ **ա)** ներգործածն խոնարհման բայածների բուն հրամայական եզակին **չի** եզրափակվում **յ**-ով՝ **անսա՛, փութա՛, անցո՛, ուսո՛** և այլն, **բ)** ցուցական դերանունների ուղիղ և թեքված ձևերը, ինչպես նաև եղանակավորող որոշ բառեր դարձյալ **յ**-ով չեն ավարտվում՝ **սա, դա, նա, սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա, ահա, ապա, այո, հա** և այլն, **գ)** օտար փոխառյալ հատուկ անունների վերջում ևս **յ** չի գրվում՝ **Աննա, Անանիա, Ասիա, Յուդա, Սիրիա** և այլն:

Կան, սակայն, մի քանի միավանկ բառեր, որոնց բառավերջի յ-ն կարդացվում է՝ **բայ, գոյ, խոյ, ճայ, նայ (խոնավ), Նոյ, վայ, հայ**:

Ոյ երկբարբառը բառամիջում բաղաձայնից առաջ արտասանվում է որպես **ույ**, այսինքն՝ արդի հայերենում **ույ** երկհնչյուն ունեցող բառերը դասական ուղղագրությամբ գրվելու են **ոյ** երկբարբառով, օրինակ՝ **բոյս, գոյն, մոյթ, մոյր, մոյծ, յոյս, յոյժ, յոյն** և այլն:

Վարժություն 1. Տրված բառերում գծիկները փոխարինել **ոյ** երկբարբառով:

ակնակառ-ց, անդամալ-ծ, բ-ն, բնախ-զ, գ-ժ, գ-ն, գ-ք, դ-զն, դ-ն, գ-զ, գայր-թ, թ-ն, ժ-ժ, լ-ս, խար-կ, ծածկ-թ, կ-ս, կ-ր, համբ-ր, ճկ-թ, մ-կ, , մակար-ծ, մաշած-, մտակոր-ս, յ-զ, նշ-լ, ողկ-զ, ուր-ն, ք-ր, միեւն-ն:

Վարժություն 2. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրության:

ա) Աբեղա, աղա՛, առարկա, Ասիա, արքայ, Գեղամա, Եզեկեա, երեխա, ի վերա, խիլա, ծառա, մերձակա, մեքենա, նորա, նոքա, պատմեա՛, Ռեբեկա, Սասնա, սոքա, Սևանա, Վանա, քուրա:

բ) Անգո, ամիրա, բարեհաճո, դշխո, երեկո, հանածո, ի ներքո, վայր ի վերո, լուսո, Կարնո, մամլո, պահածո, սզո, սիրո:

դ) Անդամալույծ, անհույզ, անհույս, անպաճույճ, արույր, արտույտ, կառույց, ինքնուսույց, դույն, զեկույց, ճրագալույց, նույն, պարուսույց:

ԵՈՒԲԱՐԲԱՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գրաբարյան եռաբարբառներն իրենց կազմում ունեն երկբարբառներ, ուստի նրանց ուղղագրությունը և արտասանությունը պայմանավորված են իրենց կազմում գտնվող երկբարբառներով: Այսպես՝ **եայ** եռաբարբառը **եա** եւ բառավերջյան **այ** կապակցություններից է բաղկացած, հետևաբար գործում են այս 2 հնչյունախմբերի ուղղագրական կանոնները՝ բառավերջի **ա-ն** փակվում է չարտասանվող յ-ով, իսկ **եա-ն** համապատասխանում է արդի հայերենի **յա** երկհնչյունին, ինչպես՝ **աշտեայ, հրեայ, պաշտօնեայ, քաղեայ, քրիստոնեայ** և այլն:

եաւ եռաբարբառի կազմում **եա-ն** է և **աւ/օ** երկբարբառը, ինչից բխում է, որ բաղաձայնից առաջ **եաւ-ը** գրվելու և արտասանվելու է **եօ**, օրինակ՝ **այգեաւք-այգեօք, եկեղեցեաւք-եկեղեցեօք, ընտանեաւք-ընտանեօք, սիրելեաւք-սիրելեօք**, սրանք բոլորը գրաբարյան **ո-ա** խառն հոլովման հոգնակի գործիականի ձևերն են:

Իոյ եռաբարբառը հանգում է **ոյ** երկբարբառի ուղղագրության և արտասանության կանոններին, բաղաձայնից առաջ այն արտասանվում է **վոյ**, իսկ բառավերջում՝ **վո**: Այսինքն՝ **վոյ** արտասանությունն ունեցող ձևերը պետք է գրվեն **ւոյ՝ այգւոյն, սիրելւոյն, երանելւոյն, թշնամւոյն** և այլն:

Վարժություն 1. Տրված բառերում գծիկները փոխարինել **եայ** (ա կետ), **եաւ** (բ կետ), **ւոյ** (գ կետ) եռաբարբառներով:

ա) Անդ-, եռամ-, եւթնօր-, երկաթ-, երկարամ-, երկոր-, դուզնաք-, ծովափն-, կճ-, հազարամ-, հնգետասանամ-, կիրակնօր-, շաբաթօր-:

բ) Եկեղեց-ք, եղեւն-ք, թշնամ- ք, ընտան-ք, ծերուն-ք, կարծ-ք, կեղծ-ք, հարսան-ք, չար-ք, պատան-ք:

գ) Արմաւեն-ն, առաքին-ն, բար-ն, գար-ն, գոտ-ն, ըստ արժան-ն, ըստ կարել-ն, թզեն-ն, մատան-ն, պատան-ն, պատասխան-ն, տեղ-ն:

ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Վարժություն 2. Արևելահայերեն բառաձևը փոխարկել դասական ուղղագրության:

Ամանորյա, ամսորյա, առօյա, ասվյա, բրոյա, ըստ արժանվոյն, հավաստյավ, հնգամյա, հնօրյա, հրեա, ընտանյոք, կարծյոք, մարմարիոնյա, մետաքսյա, պաշտոնյա, փայտյա, օտարերկրյա:

1. Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք. Ձի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք. եւ որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ: Ձի՞ տեսանես զշիղ յական եղբօր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսանես: Կամ զհա՞րոյ ասես ցեղբայր քո՝ թող հանից զշիղ յականէ քումմէ. եւ ահաւաղիկ ի քում ականդ գերան կայ: Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցիս հանել զշիղն յականէ եղբօր քո:

Մի՛ տայք զսրբութիւն շանց, եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, եւ դարձեալ երգիծուցանիցեն զձեզ:

Խնդրեցէք, եւ տացի ձեզ. հայցեցէք, եւ գտցիք. բախեցէք, եւ բացցի ձեզ. Ձի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Ո՞ իցէ ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա: Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ զիտէք պարգես բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափես առաւել Յայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա: Ձամենայն զոր միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա, զի այս իսկ են օրէնքն եւ մարգարէք....

(Մատթեոս, ԳԼ. Է)

2. Ձգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ ի ներքոյ են գայլք յափշտակողք: Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցեն՞ ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուզ: Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ չար առնէ: Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար պտուղ բարի առնել: Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝ հատանի եւ ի հուր արկանի: Ապա ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա...

Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ առնէ զսոսա՝ նմանեսցէ առն իմաստնոյ որ շինեսց զտուն իւր ի վերայ վիմի: Իջին անձրեւք եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին

զտունն, եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր: Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ ոչ առնէ զսոսա՝ նմանեցէ առն յիմարի որ շինեաց զտուն իւր ի վերայ աւագոյ: Իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն, եւ անկաւ. եւ էր կործանուին նորա մեծ յոյժ:

(Մատթէոս, ԳԼ. Է)

3. Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զղարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղել զիրաւունս. Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս եւ զհանճար: Որոց իբրեւ լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ զառաջնորդութիւն ստասցի: Ի միտ առցէ զառակս եւ զբանս խորինս, զճառս իմաստնոց եւ զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկելոջ Տեառն, հանճար բարի ամենեցուն, որ առնեն զնա, պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն եւ զխրատ ամբարիշտք անգոսնեն:

Լուր, որդեակ, խրատու հօր քո եւ մի՛ մերժեր զօրէնս մօր քո: Զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո եւ մանեակ ոսկի ի պարանոցի քուն:

(Առակք Սողոմոնի, ԳԼ. Ա)

4. Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր: Ոչ օգնեսցեն զանձք անօրինաց, այլ արդարութիւն փրկէ ի մահուանէ...

Որդի խրատեալ իմաստուն լիցի եւ զանհիմիտն ի ծառայութեան վարեսցէ: Ապրեցաւ ի խորշակէ որդի իմաստուն, խորշակահար լինի ամարայնի որդի անօրէն... Սիրտ իմաստուն ընկալցի զպատուիրանս, եւ ցոփն շրթամբք զայթակղելով կործանեսցի: Որ գնայ միամտութեամբ, գնայ յուսով, իսկ որ թիրէ զճանապարհս իւր, յայտնի լիցի: Որ ակնարկէ ակամբ նենգու-

թեամբ, ժողովէ արանց զտրտմութիւն, որ յանդիմանէ համարձակութեամբ, առնէ զխաղաղութիւն...

Ատելութիւն գրգռէ զհակառակութիւն, եւ զամենեսին որ ոչն հակառակին ծածկէ սէր: Որ ի շրթանց բղխէ իմաստութիւն, իբրեւ զաւազանաւ հարկանէ զայր անմիտ...

(Առակք Սողոմոնի, ԳԼ. Ժ)

5. Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյ, յորժամ ձեռնհաս իցես օգնել նմա: Մի՛ ասիցես, թէ երթ եւ եկեսցիր, եւ վաղիւ տաց, զի կարօղ եւս իցես բարի առնել, քանզի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ: Մի՛ նիւթեր բարեկամի քուն չարիս, որ յեցեալ եւ յուսացեալ իցէ ի քեզ: Մի՛ թշնամասէր լինիր մարդոյ ի տարապարտուց, զի մի՛ չար ինչ գործիցէ քեզ: Մի՛ ստանար նախատինս յարանց չարաց, եւ մի՛ նախանձիր ընդ ճանապարհս նոցա:

(Առակք Սողոմոնի, ԳԼ. Գ)

6. Եւ օձն էր իմաստնագոյն, քան զամենայն զազանս, որ ի վերայ երկրի, զոր արար Տէր Աստուած, եւ ասէ օձն ցլինն՝ զի՞ զի ասաց Աստուած, թէ ամենայն ծառոց, որ իցեն ի ներքս դրախտի այդր, մի ուտիցէք: Եւ ասէ կինն ցօձն՝ ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք, բայց ի պտղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտին: Ասաց Աստուած՝ մի՛ ուտիցէք ի նմանէ եւ մի՛ հուպ լինիցիք, զի մի՛ մեռանիցիք: Եւ ասէ օձն ցլինն՝ ոչ եթէ մահու մեռանիցիք, զի գիտէր Աստուած, թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր, եւ լինիցիք իբրեւ զաստուածս՝ ճանաչել զբարի եւ զչար:

(Մատթէոս, ԳԼ. Ե)

7. Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա եւ ասեն. «Մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակի»: Նա պատասխանի ետ ասէ ցնոսա.

«Որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի Սարդոյ: Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են, իսկ որոմնն որդիք չարին են: Եւ թշնամին, որ վարեաց զայն՝ Սատանայ է, եւ հունձքն կատարած աշխարհիս է, եւ հնձողքն հրեշտակք են: Որպէս ժողովի որոմնն եւ ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս: Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, եւ զամենայն, ոյք գործեն անօրէնութիւն: Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց: Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ»:

(Մատթէոս, ԳԼ. ԺԳ)

8. Ասաց եւ առ կոչնականսն առակ մի, հայեցեալ է, թէ զհա՛րդ բարձրնտիր լինէին, ասէ ցնոսա. «Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս, մի՛ բազմիցիս յառաջին բարձին, գուցէ պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ: Եւ եկեալ, որ զքեզն եւ զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ՝ Տուր սմա տեղի: Եւ ապա սկսանիցիս ամօթով գլետին տեղին ունել: Այլ յորժամ կոչիցիս, երթիջիր բազմեսջիր յետին տեղուջ, զի յորժամ զայցէ, որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ. «Բարեկամ, ի վեր մատիր»: Յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց: Զի ամենայն, որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեսցուցանէ զանձն՝ բարձրացի:

(Ղուկաս, ԳԼ. ԺԴ)

9. Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր: Եւ երկիր էր աներելոյթ եւ անպատրաստ, եւ խաւար ի վերայ անդնդոց. եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. «Եղիցի լոյս». եւ եղև լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է. եւ մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին: Եւ կոչեաց

Աստուած զլոյսն Տիւ եւ զխաւարն կոչեաց Գիշեր. եւ եղև երեկոյ եւ եղև վաղորդայն, օր մի....

Եւ ասաց Աստուած. «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան, եւ իշխեսցեն ձկանց ծովու եւ թռչնոց երկնից եւ անասնոց եւ ամենայն երկրի եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի»: Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ արար զնոսա: Եւ օրհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. «Աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր եւ տիրեցէք դմա...»:

(Ծնունդք, ԳԼ. Ա)

10. Եւ կատարեցան երկինք եւ երկիր եւ ամենայն զարդնոցա: Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի զգործս իւր, զոր արար, եւ յանգեաւ յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց, զոր արար: Եւ օրհնեաց Աստուած զօրն եւթներորդ եւ սրբեաց զնա, զի ի նմա հանգեաւ յամենայն գործոց իւրոց, զոր սկսաւ առնել Աստուած....

Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղև մարդն հոգի կենդանի:

Եւ տնկեաց Աստուած զդրախտն՝ յեղեմ ընդ արեւելս, եւ եղ անդ զմարդն, զոր ստեղծ: Եւ բուսոյց եւս Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել եւ քաղցր ի կերակուր, եւ զծառն կենաց ի մէջ դրախտին, եւ զծառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ եւ չարի...

(Ծնունդք, ԳԼ. Բ)

11. Լաւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտուես լի զենլեօք եւ բարեօք թշնամութեամբ: Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց եւ ընդ եղբարս բաժանեսցի մասն: Որպէս փորձի ի բովս արծաթ եւ ոսկի, նոյնպէս ընտրէ զսիրտս Աստուած: Չարի հնազանդի լեզու անօրինաց, եւ արդար ոչ հայի ի շրթունս սուտս: Հաւատացելոյն ամենայն աշխարհ ընչիւք լի է, անհաւատին եւ ոչ դանգ մի: Որ կատակէ զաղքատով՝ բարկա-

ցուցանել զԱրարիչ նորա, եւ ոսոն հարկանել կորուսելոյն՝ ոչ արդարասցի. իսկ որ գթայն՝ ողորմութիւն գտցէ:

(Առակք Սողոմոնի. ԳԼ. ԺԷ)

12. Ամենեցուն ժամանակ է, եւ ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից: Ժամանակ ծնանելոյ եւ ժամանակ մեռանելոյ. ժամանակ տնկելոյ եւ ժամանակ խլելոյ զտնկեալն. ժամանակ սպանանելոյ եւ ժամանակ բժշկելոյ, ժամանակ քակելոյ եւ ժամանակ շինելոյ. ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ եւ ժամանակ կաքաւելոյ. ժամանակ ձգելոյ քարինս եւ ժամանակ ժողովելոյ քարինս. ժամանակ խնդրելոյ եւ ժամանակ կորուսանելոյ. ժամանակ լռելոյ եւ ժամանակ խօսելոյ. ժամանակ սիրելոյ եւ ժամանակ ատելոյ. ժամանակ պատերազմի եւ ժամանակ խաղաղութեան:

(Ժողովօղ. ԳԼ. Գ)

13. Լաւ է լսել զպատուհաս իմաստնոյ, քան լսել մարդոյ զերգս անմտաց: Զի որպէս զծայն փշոց ի ներքոյ կաթսայի, այնպէս ծաղր անմտաց. սակայն եւ այն ընդունայնութիւն է: Բարի է զկատարած բանից, քան զսկիզբն իւրեանց, բարի է երկայնամիտ՝ քան զհպարտացեալն ոգւով: Մի՛ փութար յոգի քո բարկանալ, զի բարկութիւն ի ծոց անզգամաց հանգիցէ

Մի՛ կարի արդար լինիր, եւ մի ճարտարեր առաւել, զի մի՛ թիրեցցիս: Մի՛ ամպարշտեր կարի եւ մի՛ լինիր խիստ, զի մի՛ տարածամ մեռցիս: Բարի է, եթէ ի կողմն այտորիկ լինիցիս...

Իմաստութիւն օգնեցէ իմաստնոյն, քան զտասն իշխան, որ իցեն ի քաղաքի: Զի մարդ ոչ գոյ արդար ի վերայ երկրի, որ գործէ զբարիս եւ ոչ մեղանչիցէ:

(Ժողովօղ, ԳԼ. Է)

14. Եղբօրորդին իմ սպիտակ է եւ կարմիր՝ ընտրեալ ի բիրուց: Գլուխ նորա յոսկոյ կեփագեայ, վարսք նորա կռածոյք

սեաւ իբրեւ զագռաւ: Աչք նորա իբրեւ զաղանիս ի վերայ լիութեան ջրոց, լուացեալ կաթամբ, նստեալ ի վերայ ջրոց լրութեան: Ծնօտք նորա իբրեւ զտաշտս խնկոց բուրեն զանուշահոտութիւն իւղագործաց. շրթունք նորա շուշանք՝ բղխեն զմուռս լիութեան: Զեռք նորա ոսկիք ճախարակեայք՝ լցեալ ակամբք Թարսսայ. որովայն նորա տախտակ փղոսկրեայ ականակապ յականց շափիղայ: Սրունք նորա սիւնք մարմարեայք հաստատեալ ի վերայ ոսկի խարսխաց. տեսիլ նորա որպէս զընտիր եղեւնափայտից Լիբանանու: Կոկորդ նորա լի քաղցրութեամբ եւ ամենեւին ցանկալի: Այն է եղբօրորդին իմ եւ այն է մերձաւոր իմ, դստերք Երուսաղեմի:

(Երգ երգոց, ԳԼ. Ե)

15. Ես եմ որթն ճշմարիտ, եւ Զայր իմ մշակ է: Ամենայն ուռ, որ յիս է եւ ոչ բերէ պտուղ՝ կտրէ զնա. եւ ամենայն, որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել եւս պտղաբեր լիցի: Դուք արդէն իսկ սուրբ էք վասն բանին, զոր խօսեցայ ընդ ձեզ: Կացէք յիս եւ ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս եւ դուք եթէ ոչ յիս հաստատեալ իցէք: Ես եմ որթ եւ դուք ուռ, որ հաստատեալ է յիս եւ ես ի նա. նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ ոչինչ կարէք առնել: Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն եւ ցամաքեցաւ, եւ ժողովեն զնա եւ ի հուր արկանեն, եւ այրի: Եթէ կայցէք յիս եւ բանք իմ ի ձեզ կայցեն, զոր ինչ կամիցիք՝ խնդրեսցիք, եւ լինիցի ձեզ: Յայսմիկ փառաւորեցաւ Զայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք, եւ եղիջիք իմ աշակերտք:

(Աւետարան ըստ Յովհաննու, ԳԼ. ԺԵ)

16. Զայեցարուք եւ տեսէք, զի ոչ ես ինձ միայն վաստակեցի, այլ ամենեցուն, որ խնդրեն զիմաստութիւն: Լուարուք ինձ, իշխանք ժողովրդոց, եւ առաջնորդք, ունկնդիր լերուք: Մի՛ տայք իշխանութիւն կնոջ եւ որդւոց, եղբաւր եւ բարեկամի՝ ի

կենդանութեան ձերում: Մինչդեռ կենդանի ես՝ մի՛ փոխանակեր զքեզ ամենայն մսեղենույ: Լաւ է քեզ, զի որդիքն քո զքեւ զայցեն, քան թէ դու հայիցիս ի ձեռս նոցա: Յամենայն գործս մի լինիր առաւել, եւ մի՛ տար բամբասանս փառաց քոց: Բիր եւ բեռն եւ բուտ իշոյ. հաց եւ զան, գործ ծառայի: Չայրացիր նմա զանիւ եւ զտցես հանգիստ: Լուծ եւ փոկ պարանոց ամբարտաւանից խոնարհեցուցանեն. եւ զծառայ չարագործ՝ տանջանք եւ կապանք: Ի գործ կացո՛ր զնա, զի մի յուլասցէ ի մարմին իւր: Եւ առանց իրաւանաց մի՛ ինչ գործեր, այլ ընկալջիր զնա իբրեւ զանձն քո:

(Գիրք Սիրաքայ, ԳԼ. ԼԳ)

17. Որ առնէ զողորմութիւն՝ փոխ տայ ընկերի, եւ որ սփռէ ձեռամբ՝ պահէ զպատուիրանս: Բազունք են, որ զփոխն իբրեւ զգիւտ համարեցան, եւ ջան մեծ հասուցին փոխատուաց իւրեանց: Յառնուլն համբուրեն զձեռս, եւ յայլոյ իրաց զիւր ձայնն յեղուկս արկանէ. եւ ի ժամանակի հատուցմանն յապաղէ զժամանակն՝ եւ բանս տայ ձանձրալիս. եւ եթէ կարի տագնապիցէ՝ զկէսն թէ վճարէ, եւ նա ի միտս համարի եթէ գիտոս գտի: Չանէծս եւ բամբասանս արկանէ ի վերայ նորա. եւ ստանայ զնա իւր թշնամի տարապարտուց, եւ փոխանակ մեծարանաց՝ անարգանս: Յաղագս պատուիրանին՝ օգնական լեր աղքատի, եւ յողորմութենէ մի ունայն զնա արծակէր: Եւ կորո՛ գարծաթն վասն եղբոր եւ բարեկամի եւ մի՛ ժանգակեր լիցի ընդ կորուստ վիմաւ:

(Գիրք Սիրաքայ, ԳԼ. ԻԹ)

18. Չի բազունք մեղան վասն յուլութեան: Եւ եթէ ոչ զահէ Տեառն բուռն հարցեն, արագ արագ կործանեսցին տունք նոցա: Չանօթս կաւեղէնս թրծէ հնոց, եւ մարդոյ փորձութիւն ի խորհուրդս իւր, զի իբրեւ զքեր ծառոյ երեւեսցի պտուղ նորա, սոյնպէս բանք խորհրդոց ի սիրտ մարդոյ: Եթէ զհետ արդարութեան երթաս՝ վաղ հասանես նմա, եւ զգեմուս զնա իբրեւ պատմուճան փառաց: Ամենայն թռչուն առ իւր նմանիսն զնայ, եւ

ճշմարտութիւն առ այնս որ գործեն զարդարութիւն: Գառք արդարոց յամենայն ժամ իմաստութիւն: Սպասեսցիր ժամանակի ի մէջ անմտաց, բայց ի մէջ խորհրդականաց կանխեսցիր: Գառք յիմարաց ձանձրոյթ, եւ ծաղր նոցա գրգռութիւն մեղաց: Չբարեկամ քո սիրեա՛, եւ հաստատեա՛ դու ի նա... Յարուածք նենգաւորի առաւել են քան զվէր: Որ ընկերի հոր հատանէ՝ ինքն լցցէ զնա:

(Գիրք Սիրաքայ, ԳԼ. ԻԸ)

19. Որդեակ, եթէ ընկալեալ զպատգամս պատուիրանի իմոյ ծածկեսցես յանձին քում: Լուիցէ իմաստութեան ունկն քո. եւ առակեսցես զսիրտ քո ի հանճար, եւ աւանդեսցես զնա որդւոյ քում ի խրատ: Չի եթէ զիմաստութիւն կոչեսցես ի քեզ եւ հանճարոյ տացես զձայն քո: Եւ եթէ խնդրեսցես զնա զիբրեւ զարծաթ ընտիր եւ իբրեւ զգանձս քննեսցես զնա, յայնժամ ի միտ առցես զերկիւղ Տեառն, եւ զգիտութիւն Աստուծոյ զտցես: Չի Տէր տայ զիմաստութիւն, եւ յերեսաց նորա գիտութիւն եւ հանճար: Յայնժամ ի միտս առցես զարդարութիւն եւ զիրաւունս եւ ուղղեսցես զամենայն շաւիղս բարութեան: Չի եթէ եկեսցէ իմաստութիւն ի միտս քո, եւ զհանճար յանձին քում բարի համարեսցես լինել: Խորհուրդք բարեաց զգուշացեն զքեւ, եւ միտք սուրք պահեսցեն զքեզ:

(Առակք Սողոմանի, ԳԼ. Բ)

20. Ի ճանապարհս ամպարշտաց մի երթայցես, եւ մի նախանձիցիս ընդ ճանապարհս անօրինաց, եւ ի տեղուոջ ուր բնակիցեն՝ ընդ այն մի անցանիցես, խտորեա՛ ի նոցանէ, եւ խորշեաց անտի: Չի ոչ ննջեն, եթէ ոչ չար գործիցեն. բարձեալ է քում նոցա եւ ոչ ննջեն: Որք ուտեն զկերակուրս ամպարշտութեան, եւ զինեաւ անօրէնութեան արբենան: Գանապարհք արդարոց իբրեւ զլոյս ծագեն, առաջնորդեն եւ լուսաւորեն, մինչեւ տիւն լուսաւորեսցէ: Գանապարհք ամպարշտաց խաւարինք եւ ոչ զիտեն զհարդ գայթակղին: Որդեակ, իմոյ իմաստութեան անսա՛, եւ իմոց

բանից մատո՛ղ զունկն քո: Ձի մի պակասեսցին աղբերք քո, պահեա՛ զնոսա ի սրտի քում... Ի բաց արա՛ ի քէն զբերան կամակոր, եւ շրթունս անիրաւս մերժեա՛ ի քէն:

(Առակք Սողոմոնի, Գլ. Դ)

21. Իմաստութիւն շինեաց իւր տուն, եւ կանգնեաց սիւնս եւթն.. Եւ ասէ, որ ոք իցէ անզգամ, առ իս եկեսցէ: Եւ ցպակասմիտսն ասէ, եկայք, կերայք ի հացէ իմնէ եւ արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ: Թողէք զանզգամութիւն եւ կեցջիք, խնդրեցէք զիմաստութիւն, զի ապրեսջիք, եւ ուղղեցէք գիտութեամբ հանճար եւ ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխրատ: Որ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում անարգանս եւ, որ յանդիմանէ զամպարիչտս, ատեայ զանձն: Մի յանդիմաներ զչարս, զի մի ատեսցեն զքեզ, յանդիմանեա զիմաստունն եւ սիրեսցէ զքեզ, Տուր իմաստնոյն պատճառս եւ իմաստնագոյն եւ լիցի, տեղեկացո զարդարն եւ յաւելցէ ընդունել:

Որ հաստատի ի ստութիւն, այնպիսին զհողմս արածէ, եւ նոյն հալածէ զթռչունս թեւաւորս, քանզի եթող զճանապարհս այգւոյ իւրոյ:

(Առակք Սողոմոնի, Գլ. Թ)

22. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց, եղբուրք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ աղաւնիս: Ջգոյշ լինիջիք ի մարդկանէ, զի մատնեսցեն զձեզ յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ: Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց: Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի հոգայցէք, թէ որպէս կամ զինչ խօսիցիք, զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ, զինչ խօսիցիք: Ձի ոչ եթէ դուք իցէք, որ խօսիցիքն, այլ Յոգին Յօր ձերոյ, որ խօսիցի ի ձեզ: Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, եւ հայր՝ զորդի, եւ յարիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիք ատե-

ցեալք յամենեցունց վասն անուան իմոյ, իսկ որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ:

... Եւ մի երկնչիցիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին եւ զոգի ոչ կարեն սպանանել, այլ երկերուք դուք յայնմանէ, որ կարողն է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի:

(Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. Ժ)

23. Դարձեալ լուարուք, զի ասացաւ առաջնոցն: Մի երդունուցու սուտ, բայց հատուցես Տեառն զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի երդնուլ, մի յերկինս, զի աթոռ է Աստուծոյ: Եւ մի յերկիր, զի պատուանդան է ոտից նորա: Եւ մի յերուսաղեմ, զի քաղաք է մեծի Արքայի: Եւ մի գլուխ քո երդնուցու, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան՝ Այոն այո, եւ ոչն՝ ոչ, զի ասելին քան զայն ի չարէն է: Լուարուք ապաքէն, զի ասացաւ՝ Սիրեսցես զընկեր քո եւ ատեսցես զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ՝ Սիրեսցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանհօծիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց եւ աղօթս արարէք ի վերայ այնոցիկ, որ լլկեն զձեզ եւ հալածեն, զի եղիջիք որդիք Յօր ձերոյ, որ յերկինսն է: Ձի արեգակն իւր ծագէ ի վերայ չարաց եւ բարեաց եւ ասէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց:

(Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. Ե)

24. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի, որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

...Դուք էք աղ երկրի, ապա թէ աղն անհամի, իւ յաղիցէ, ոչ իմիք ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս եւ կոխան լինել ի մարդկանէ: Դուք էք լոյս աշխարհի, ոչ կարէ քաղաք թաքչել, որ ի վերայ լերին կայցէ: Եւ ոչ լուցանեն ճրագ եւ դնեն ընդ գրւանաւ, այլ ի վերայ աշտանակի եւ լոյս տայ ամենեցուն,

որ ի տանն իցեն: Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՅայր ձեր, որ յերկինս է:

Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարես, ոչ եկի լուծանել, այլ լնուլ:

(Աւետարան ըստ Մատթէոսի, Գլ. Ե)

25. Անէծք Տեառն ի տունս անպարշտաց, յարկք արդարոց օրհնին: Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Չփառս իմաստունք ժառանգեսցեն, իսկ անպարիշտք բարձրացուցին զանարգանս:

Աչք քո ուղիղ հայեսցին, եւ արտելանունք քո արդար ակնարկեսցին: Ձշաւիղս ուղիղս արասցես ոտից քոց, եւ զճանապարհս քո ուղղեսցես: Մի՛ խտորիցես յաջ եւ մի յահեակ, դարձն զոտն քո ի ճանապարհէ չարէ: Ձի ճանապարհս, որ յաջմէ են, զիտէ Աստուած, թիւր են ճանապարհք, որ ի ձախմէ են, այլ ինքն ուղիղ արասցես զշաւիղս քո, եւ զճանապարհս քո խաղաղութեամբ յառաջեցուսցէ:

(Առակք Սողոմոնի, Գլ. Գ, Դ)

26. Ահաւաղիկ Տէր ապականեսցէ զտիեզերս եւ աւերեսցէ զնա եւ տապալեսցէ զատակս նորա եւ ցրուեսցէ զբնակեալս ի նմա: Եւ եղիցի ժողովուրդն իբրեւ զքահանայն, եւ ծառայն իբրեւ զտէրն, եւ աղախինն իբրեւ զտիկինն, եւ եղիցի զնօղն իբրեւ զվաճառականն եւ փոխատունն իբրեւ զփոխառն, եւ պարտապանն իբրեւ պարտատէրն: Ապականելով ապականեսցի երկիր, եւ յափշտակութեամբ յափշտակեսցի երկիր, զի բերան Տեառն խօսեցաւ զայս: Լռեցին ուրախութիւնք թմբկաց, լռեցին հպարտութիւնք եւ մեծութիւնք անպարշտաց, լռեցին ձայնք քնարաց: Լքցին քաղաքք աւերակք, եւ ապարանք մնացեալք կորիցեն: Այս ամենայն եղիցի յերկրի մէջ հեթանոսաց:

(Մարգարեութիւն Եսայեայ, Գլ. ԻԴ)

27. Մի փութար բերանով քով եւ մի վաղվաղեսցէ սիրտ քո հանել զբանս առաջի Աստուծոյ, զի աստուած յերկինս է եւ դու յերկրի, վասն այնորիկ եղիցին բանք քո սակաւք: Ձի հասանէ երազ ի բազմութեան փորձութեան եւ ձայն անզգամի ի բազմութեան բանից: Եւ որպէս ինչ ուխտիցես դու Աստուծոյ, մի համիցես հատուցանել զնա, զի ոչ են կամք ի ձեռս անզգամաց, դու որչափ ուխտիցես, հատո:

Ձի լաւ է քեզ չուխտել, քան ուխտել եւ ոչ հատուցանել: Մի տար բերան քո առ ի յանցուցանելոյ զմարմին քո, եւ մի ասիր առաջի Աստուծոյ, թէ անգիտութիւն է, զի մի բարկասցի Աստուած ի բարբառ քո եւ ապականեսցէ զգործս ձեռաց քոց:

... Որ սիրէ զարծաթ, ոչ յազեսցի արծաթով, եւ որ սիրեաց ի բազմութեան իւրում զարդիւնս, քանզի և այն ունայնութիւն է:

(Ժողովօղ, Գլ. Ե)

28. Լաւ է անուն բարի, քան զմեծութիւն բազում եւ քան զարծաթ եւ զոսկի շնորիք բարիք: Մեծատուն եւ աղքատ միմեանց պատահեցին, երկոցունց այցելութիւն առնէ Տէր: Խորագիտի տեսեալ զչարագործին պատժեալ, հաստատութեամբ խրատէ զանձն եւ անմտաց անցեալ առ նոքօք վնասեցան: Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն եւ մեծութիւն եւ փառք եւ կեանք: Տատասկ եւ որոգայթ ի ճանապարհս թիւրաց, իսկ որ զգոյշ կայ անձին իւրում, մերժեսցի ի նոցանէ:

Աղքատք տիրեսցեն մեծատանց, եւ ծառայք տերանց իւրեանց փոխ տայցեն: Որ սերմանէ զանզգամութիւն, հնձեսցէ զչարիս, եւ հարուածս գործոց իւրոց բովանդակեսցէ: Չայր զուարթ եւ զառատ սիրէ Աստուած, որ ողորմի տնամկին, ինքն կերակրեսցի:

(Առակք Սողոմոնի, Գլ. ԻԲ)

29. Եւ եթէ զայթակղեցուսցէ զքեզ զձեռն քո, հատ, ընկեա ի քէն, զի լաւ է քեզ խել մտանել ի կեանսն յաւիտենից, քան զերկուս ձեռս ունել եւ երթալ ի գեհեն, ի հուրն անշէջ: Եւ եթէ ոտն քո զայթակղեցուսցէ զքեզ, հատ, ընկեա զնա ի քէն. լաւ իցէ քեզ

կաղ մտանել ի կեանսն յաւիտենից, քան երկուս ոտս ունել եւ անկանել ի գեհեն: Եւ եթէ ակն քո գայթակղեցուցէ զքեզ, հան զնա ի բաց. լաւ իցէ քեզ միով ականք մտանել յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունել եւ անկանել ի գեհեն, ուր որդն նոցա ոչ մեռանի, եւ հուրն ոչ շիջանի: Ձի ամենայն ինչ հրով յաղեսցի, բարուք է աղ, եւ եթէ աղն անհամեսցի, իւ՞ համեմեսցի, արդ դուք կալարուք յանձինս ձեր զաղն եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս:

(Աւետարան ըստ Մարկոսի, Գլ. Թ)

30. Ձի իւրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի, զի ոչ եթէ ի փշոց քաղեն թուզ եւ ոչ ի մորենւոյ կթեն խաղող: Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարին, եւ մարդ չար ի չարէն բղխէ զչարն, քանզի ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա:

Ամենայն որ զայ առ իս եւ լսէ զբանս իմ եւ առնէ զնոսա, ցուցից ձեզ ում նման է: Նման է առն, որ շինիցէ տուն, որ փորեաց եւ խորեաց եւ եղ հիմն ի վերայ վիմի, ի յառնել հեղեղաց բաղխեաց գետ տունն, եւ ոչ կարաց շարժել զնա, զի հաստատեալ էր հիմնն ի վերայ վիմի: Իսկ որ լսէ զբանս իմ եւ ոչ առնէ, նման է առն, որ շինիցէ տուն ի վերայ հողոյ առանց հիման, զոր բաղխեաց գետ եւ վաղվաղակի անկաւ, եւ եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ:

(Աւետարան ըստ Ղուկասու, Գլ. Զ)

ՊԱՍՏՎԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՏՎԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ժ-ԺԱ ԴԱՐԵՐՈՒՄ

Գրաբարի գրութեան և արտասանութեան կանոնների համակարգը ունի իր զարգացման պատմությունը, որը հետագա փոփոխությունների, ելևէջումների և անգամ բախումների հետևանքով բարեփոխվել է ժամանակի հրամայականով, ներքին և արտաքին տարբեր գործոնների ազդեցությամբ: Այսօր հայության երկու հատվածներն ունեն երկու տարբեր ուղղագրական համակարգեր՝ արևմտահայությունը մասնակի շտկումներով պահպանել է գրաբարից եկող ուղղագրության ավանդական սկզբունքները, արևելահայությունը որդեգրել է այլ ճանապարհ՝ ըստ էության ժամանակի արտասանության թելադրանքով գրեթե հեղափոխական բարեփոխումների է ենթարկել ավանդական ուղղագրության կանոնները՝ երկբարբառների, երկբարբառակերպ հնչյունների և եռբարբառների մասով: Այդ բարեփոխումների հիմնական նախաձեռնողը և իրականացնողը նշանավոր հայագետ Մ. Աբեղյանն էր: Տասնամյակներ են անցել, սակայն շարունակվում են քննարկումները և որոնումները արևմտահայերեն և արևելահայերեն գրական լեզուների ուղղագրության միասնականացման նպատակով, մի աշխատանք, որը իրարամերժ տեսակետների և գիտական լուրջ բանավեճերի տեղիք է տալիս ցայսօր:

Հայոց լեզվի պատմական զարգացման դեռևս հետդասական շրջանից սկսած՝ ուղղագրության և ուղղախոսության խնդիրը եղել է քննության առարկա: Հայ քերականներից շատերն արդեն իսկ նկատել էին գրավոր և բանավոր խոսքի աստիճանաբար խորացող տարբերությունները և արձանագրել գրության և արտասանության միջև տեղի ունեցող փոփոխությունները գրական հայերենում: Դասական ուղղագրության ընդունված որոշ կանոններ չէին համապատասխանում ժամանակի բանավոր խոսքի արտահայտման ձևերին: Լեզվի զարգացման հետագա փուլերում ժ-ԺԱ դարերում հատկապես, գրային, բար-

բառային կամ նորմավորված և չնորմավորված տարբերակների բախումից առաջացած գրության և արտասանության տարբերությունները ուղղագրության համակարգային փոփոխությունների հանգեցրին, բայց քանի որ լեզուն պահպանողական համակարգ է, երկար դարեր ուղղագրության հին և նոր սկզբունքները գոյատևում էին կողք-կողքի՝ ստեղծելով անմիօրինակության և խառնագրության հակասական պատկեր: Ծագել և հրամայական էր դարձել ժողովրդին ոչ միայն հասկանալի լեզվով ստեղծագործելու, այլև այդ լեզվով գրելու պահանջ, անհրաժեշտություն: Ձևավորվում էր Կիլիկյան միջին գրական հայերենը՝ իր լեզվական համակարգով և ուղղագրությամբ, որով մեզ են ավանդվել ինքնուրույն ու թարգմանական երկեր, գիտական աշխատություններ, ձեռագիր հիշատակարաններ, վիճաբար արձանագրություններ: Ձեռագրերն ընդօրինակող գրիչները, վիճաբար վարպետ փորագրողները հաճախ դիմում էին կենդանի խոսակցական լեզվին՝ գրությունը համապատասխանեցնելով արտասանությանը, որի հետևանքով երևան են գալիս ուղղագրական անճշտություններ, գրչագրական տարբերակներ, գերճշգրտումներ:

X-XVIII դարերում ժողովրդախոսակցական լեզվի թելադրանքով հայերենի գրավոր խոսքում ամրագրվել են **ե (է), յ, վ, ու, ռ** հնչյունների ու հատկապես **աւ, եւ, իւ** երկբարբառների չկանոնակարգված ուղղագրական փոփոխությունները, որոնք վկայում են նշյալ ժամանակահատվածում հայերենի ուղղագրական և ուղղախոսական համակարգերում ճգնաժամի մասին, սկսվել էր հարաբերականորեն միասնական լեզվի երկփեղկման շրջանը՝ արևելյան և արևմտյան բարբառախմբերն աստիճանաբար, դանդաղ, բայց հետևողականորեն հեռանում էին միմյանցից՝ ձևավորելով իրենց հնչյունական տարբերակված կազմը, որոնց հիմքերի վրա էլ կձևավորվեին արևելահայ և արևմտահայ գրական լեզուները:

Է-Ե ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարի **ե**, է ձայնավորները միջին գրական հայերենում կրում են սկզբունքային փոփոխություններ:

Դեռևս V-VI դարերից սկսած՝ **ե** պարզ ձայնավորը և **է** երկբարբառակերպը արտասանությամբ այլևս չէին տարբերվում: Դրանք բառասկզբում, բառամիջում և բառավերջում միմյանց փոխարինում, իսկ որոշ դիրքերում իրենց արտասանական արժեքով նույնանում էին: Գրության և արտասանության այս տեղաշարժը առաջ է բերում նախ մասնակի, հետագայում՝ հատկապես 16-17-րդ դարերում, այս հնչյունների՝ անկանոն գրության էական փոփոխություններ, սկսվում է դրանց մի կողմից նույնացման, մյուս կողմից՝ կտրուկ տարբերակման գործընթացը:

Ժ-ժէ բնագրերում հանդիպում են **է** տառի գրության հետևյալ դեպքերը: **է-ի** փոխարեն գրվել է **ե** բառասկզբում՝

ա) **եմ** բայի ներկա ժամանակի երրորդ դեմքի և անցյալ անկատարի բոլոր ժամանակաձևերում՝ **ե, եիր, եին**: Օրինակ՝ *Գրեալ ե, գրեալ եիր, գրեալ եին*: (Ժ դար): **ե** և **է** տառերի վերոնշյալ անկանոնությունները այս երկու տառանշանների արտասանական ընդհանրության հնչյութային մերձեցման արգասիք են: **եմ** բայի ներկա՝ **եմ, ես է, ենք, եք, են** և անցյալ անկատար՝ **էի, էիր, էր, էինք, էիք, էին** ժամանակաձևերը նույն հնչումն ունենալու հետևանքով տարբեր հեղինակների երկերում, գրիչների ընդօրինակած գրքերում վերոնշյալ գրության շեղումներ են ունենում: Շեղումների պատճառներից մեկը բարբառային գործոնն էր: Անկանոնությունները հիմնականում հանդիպում են հիշատակարաններում, բժշկարաններում և վիճաբար արձանագրություններում: Մատենագրության մեջ դրանք սակավադեպ են: Օրինակ՝ *...Որ Սիմոն տվել եր Աբասողուլի խանի փեսայ Ջալբէկին...*(87 Ագուլեցի), *Մին ի թուման ել խարջեցին...* (89 Ագուլեցի), *Ես Շմաւոնի եխպայր Ջաքարես որ ամենայն բանի ակաճատես էղայ...* (83 Ագուլեցի), *...Այսօր Ագուլաց դուրս էլայ...* (5 Ագուլեցի)

բ) մի քանի բառերում և ձայնավորասկզբ միավանկ բա-
յերի անցյալ կատարյալ ժամանակի երրորդ դեմք եզակի թվում է
աճականը փոխարինվում է **ե**-ով՝ **եակ, եութիւն, եմանուել /**
էմանուէլ, ...եանց ժամանակն...

զ) բառամիջում՝ *...հնձ մի» մեղադրեք* (ԵՅ, 73):

դ) բառավերջում՝ *Տվել զարևուն զթարկն, հասրաթով զքեզ
կու տեսնե* (ԵԲ, 76):

դ) Միևնույն բառը կարող էր գրվել և՛ **ե**-ով, և՛ **է**-ով՝
թագաւորն է հրեից, կամ հրէից է սա թագաւոր (Ժ դ)

Որպէս ստամոքքն, որ ցաւիլ... Եւ գրգռեալ... (98 Ասար):

Որպէս խիստ ցաւն, որ զմարդոցն ուժն կու պակասեցնէ (98
Ասար):

Ըստ Հր. Աճառյանի՝ **ե** տառանշանը դասական հայերե-
նում բառասկզբում արտասանվել է **է**, որի հիմնավորման համար
բերում է **ե**-ով սկսվող բառերից առաջ յ նախդրի կիրառումը՝
յերկիր: Հնչյունական այս երևույթը ոչ միայն բառասկզբում, այլ
նաև բառամիջում շարունակվում է մինչև ուշ միջնադար:

XVII դարից սկսած՝ բառասկզբում **ե**-ն արտասանվում է **է**
կամ **յէ**, ըստ այդմ էլ՝ գրվում է և **յե** տառանշաններով՝ կախված
բարբառային հիմքից: **Ե**-ի **յե** արտասանական տարբերակին
անցումը կատարվել է հույժ աստիճանաբար: Օրինակ՝ *Եւ ձմեռն
յերբ տասս՝ զջուրն տաք արա և տուր* (197 Ասար), *...և եռցու յեղմն
և զփրփուրն քաշէ և յետ լից* (196 Ասար), *Կըծկեալ պշուցեալ
նային, Ի յերեսն այն Աղէկսանդրին...*(52 ԽԿ), *մեր կա, որ ի ժամ
տանի, անաղօթք ի յետ կու բերէ*:

Սեր կա, որ շուկան տանի, անվաճառ ի յետ կու բերէ (58
Քուչակ), *իմ եարն յերագիս եկավ...* (107 Քուչակ):

Ե-ի փոխարեն նկատվել են **է**-ի գրության հետևյալ դեպ-
քերը՝

ա) Բառասկզբում բաղաձայնով սկսվող միավանկ բայերի
սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի
երրորդ դեմք եզակի թվում գրվում է **է**՝ *էցոյց զթուղթն Պօղոսի,
էհաս այսմ ամի, Ինձ սուգ մեծ էթող, էհաս* նըշոյլն արեգական (16
ՊՂ), *Այսօր էհաս ինձ անդարձական* (116 ՊԴ): Ե տառանշանով է
գրվել **եմ** բայի ներկա ժամանակի առաջին և երրորդ դեմքերում՝
Ինչ էն:

բ) Բառամիջում երբեմն **ե**-ի փոխարեն գրվում է **է**, օրինակ՝
...մարդ չկարէնայ ճանաչել... (147 Ասար), *Ի քեզ եկի ծարաւ, թէ
արբուցանէս...*(ԳԱ), *...Որ թուլութնէ լինի...* (71 ԲԱ), *...Մինչ ի ես
զնացի ոչ, ականտես չէլայ, զրեցի ոչ...*(ՁԱ, 6), *...Այլ շրջայկայ
դէղորայքն էլ այսպէս կեր* (85 ՁԱ), *...Որ թուլութնէ լինի...* (71 ԲԱ),
Տեսայ, որ սոքայ էն (91 ՁԱ):

Բառավերջում **ե**-ն արտասանվում է **է**: Բառավերջում լսվող
է հնչյունը գրաբարում գրվել է **է**-ով: Ուշ միջնադարում արդեն **է**-ի
փոխարեն գրվել է **ե** տարբեր խոսքի մասերի պատկանող բա-
ռերի ուղիղ կամ թեքված ձևերում: Օրինակ՝ *Քեզ կու տեսնե...*(76
Քուչակ):

Աւ > Օ > Ո ՌԻՂԱԳՐԱԿԱՆ ԱՆՅՈՒՄ

Միջին դարերում մեսրոպյան այբուբենը համալրվել է նոր
տառանշաններով՝ **օ, ֆ**: Գրության մեջ փակ վանկի **աւ** երկբար-
բառը սկսում է **օ** արտասանվել: Պարզեցված **օ** հնչյունը ար-
տահայտվում է **ո, օ** տառերով և **աւ** տառակապակցությամբ: **Աւ**-ը
դասական հայերենում ունեցել է **աու** արտասանությունը՝ *տաւն
=տաուն*: Է դարից այս երկբարբառը բառասկզբում, բառամիջում
վերածվում է **օ** պարզ ձայնավորի, գրվում է **ո** տառանշանով կամ
աւ-ով, որի հետագա /ժ-ժէ դդ./ վկայությունները հանդիպում են
ձեռագիր մատյաններում, եկեղեցական ու վիմագիր արձանա-
գրություններում, միջնադարյան տաղերգության և այլ երկերում՝
*Ոլոմպիոս, Ովանէս, Ոհան, ի բարեխոսութիւն, Կոստանդնուպոլսի
կամ Կոստանդնուպաւղսի, հաւգոյն կամ հոգոյն, Տարոն=Տա-
րաւն*: Պարզ **ո**-ի արտասանություն ունեն **ով, ովքեր** բառերը:

Աւ երկբարբառը փակ վանկում վերածվել է նաև **ու**-ի
աւ>ո>ու աստիճանական հնչափոխությամբ՝ **նաւպա, նոպա,
նուպա** (Մխ. Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, XIII դ., Թիֆլիսի
բարբառում՝ **հուղ, փուղ, վուր**), և ընդհակառակը, **ու**-ն դարձել է
**ո՝ ուժով > ոժով, ուխտադրուժ > ոխտադրուժ, ուսին դրած > ոսին
դրած** և այլն: Երբեմն **աւ**-ի փոխարեն գրվել է **օ՝** թագօր, թօ, գօ,
փոխ.՝ թագաւոր, թաւ, գաւ, **ո**-ի փոխարեն՝ **աւ՝** խաւրիուղ,

գաւվել, դաւրա, բառասկզբում վօ արտասանվող **ո**-ի փոխարեն՝ աւ՝ աւտ, աւրկոր, աւրովայն: Ենթակայական դերբայը հանդիպում է թե՛ **ող**, թե՛ **օղ** վերջավորություններով:

Օ տառի մուտքը արձանագրվում է ԺԱ-ԺԲ դարերից, երբ փաստորեն ավարտվել էր **աւ** երկբարբառի պարզեցումը:

Ներկայացնենք բառամիջում կամ փակ վանկում **օ** ունեցող բնագրային օրինակներ:

Ի քեզ ձօնեցաւ բանըն հայրական..., Յօղն իջանէ ի վերայ թփին ... (39 ԳԱ):

Ելեալ յարգանդէ այն մօրն, Որ անուն է Ոլոմպիադայ (50 Կեչառեցի):

Վայ քո մօրն Օլոմպիայ (63 Կեչառեցի)

Փոխառյալ հասարակ և հատուկ անուններում իբրև կանոն **օ** տառն էր գրվում՝ **սօլթան, Պօղոս, Պօլիս, Մօսկով, Ըստամբօլ** և այլն:

Օ հնչյունի **աւ, ո, օ** միմյանց փոխարինող գրությունը շարունակվում է մինչև ԺԸ դար: ԺԷ դարում այս երեք գրատեսակներից ամենագործունը **օ** տառանշանի գործածությունն է:

Բառասկզբում **ո**-ն գրվում և արտասանվում էր **վո** միավանկ բառերում՝ *որ-վոր, որբ-վորբ*: Բառամիջում և բառավերջում **ո**-ն արտասանվում է **օ**:

3 - 3 ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յ տառանշանի գրությունը հինգերորդ դարում հնչյունական արժեք ուներ, օրինակ՝ **ա** և **ո** ձայնավորներից հետո **յ**-ն գրվում և արտասանվում էր: Ուսումնասիրվող շրջանում այն ձեռք է բերում ուղղագրական նշանակություն, այսինքն՝ **ա** և **ո** ձայնավորներից հետո գրվող **յ** կիսաձայնը այլևս չէր արտասանվում: **Յ**-ի ավանդական ուղղագրության շեղում է նկատվում նաև բառասկզբում և բառամիջում: **Յ** կիսաձայնի գրության անկանոնությունները մյուս տառանշանների համեմատ ամենահաճախակին են, որն էլ ուղղագրության բարեփոխման գաղափարի

ծնունդ է դառնում: Ուղղագրության վերաբերյալ «Վերլուծութիւնք բացերեւապէս բազմազան բառից եւ բայից յոգնախումբ շարագրութեամբ» վերնագիրը կրող առաջին քերականական աշխատությունը գրել է Արիստակես Գրիչը: Այս գրքում հեղինակը դիտարկում է **յ**-ի ուղղագրության հարցերը, որոնք ներկայացնում է 10 կանոնի տակ: Գիրքն ունի նաև ուղղագրական բառարան: Պահպանելով գրաբարյան ուղղագրությունը՝ միաժամանակ օրինականացնում է **ա** և **ո** տառերից հետո չարտասանվող **յ**-ի սղումը: Այս կանոնարկումը հայերենի ուղղագրության բարեփոխման առաջին փորձն էր, որն իրավական ուժ ստացավ Արիստակես Գրիչի կողմից:

Յ տառանշանի ուղղագրական շեղումներ են նկատվում աշխարհիկ գրականության մեջ, ձեռագիր հիշատակարաններում ու վիմագրություններում: Քերականական աշխատություններում և ավետարաններում դրանք սակավադեպ են: 1. Մեսրոպյան ուղղագրությունից **Յ**-ն շեղվում է բառասկզբում, երբ այն իր արտասանական արժեքով նույնանում է **հո** տառի արտասանությանը: Հր. Աճառյանի մեկնաբանությամբ՝ **յ** և **հ** հնչույթների միջև ընկած շնչել **յ**-ն հնչյունափոխվել է **հ**-ի, ինչպես որոշ բարբառներում **բ՛, գ՛, դ՛, ծ՛, ջ՛** շնչել ձայնեղները վերածվել են **փ. ք, թ, ց, չ** շնչել խուլերի, այսինքն՝ տեղի է ունեցել **յ**-ի խլացում: Այս շեղումները սկսվել են ԺԳ դարում և շարունակվել մինչև ԺԷ-ԺԸ դարերը: Զորօրինակ՝ *Ով հետ վերցնէ... և զմարդն սրտահեշտ առնէ* (190 Ասար): *...Գնաց ...ի գիւղն Անապատ, յանկարծակի յիվանդացաւ...* (84 Ագուլեցի): *Յարաւային կողմն փողոյակն է ...* (90 Ագուլեցի):

2. Բառամիջում **յ** հնչյունը պահպանել է իր արտասանությունը, օրինակ՝ արքայական: Սակայն բառավերջում **ա** և **ո** ձայնավորներից հետո չգրվող **յ**-ի համաբանությամբ **յ** չեն գրում բառամիջում, հատկապես այդ ձայնավորներով ավարտվող բառերի բաղադրման ժամանակ, ինչպես՝ *արքաի, ծառաի, Կաննի* և այլն: Կա նաև հակառակ երևույթը՝ **ա** հոդակապից հետո **յ**-ի հավելյալ գործածություն, որ իրականում նշված կանոնի շփոթման արդյունք է՝ *բացայկա, գլխայցաւ, զձեռայգիր* և այլն, այս երևույթին առավել մանրամասն կանդրադառնանք:

Եւ զստանորն ուժովցնէ և օգտէ հևուցն և **նստոյտեղացն** ցաւերոյն... (180 Ասար), սայ **վերայկացու** դրեց... (52 Ագուլեցի):

3. Բառավերջում **ա** և **ո** ձայնավորներից հետո

ա) յ-ն չի գրվում՝ **Եւ առ զդմակն և նօսր տապակէ և ի վրա դիր հաւասար** (179 Ասար): ... **Եւ առատանա** ամէն ինչք իւր ... (184 Ասար): **Եւ թէ յղի կանայք ի հետն վերցնեն զտղան**... (190 Ասար): **Գիտես, որ դարիպ եմ ես, դարիպին սիրտն չի մընա** (204 Քուչակ):

բ) կամ գրվում է անհարկի հատկապես հրամայական եղանակի երկրորդ դեմք եզակի թվում՝ **Եւ թէ կամիս այդ նշանօքդ արայ զամէնն**... ...**Ուժով կրակ արայ**... (179 Ասար): **Մաճուն արայ մեղրով**... ... (201 Ասար): ...**Դեղ արայ** այտուցին...**աղայ** և մաղէ ի կաղամբի ջրով ... (205 Ասար): **Գինով եփեայ** և տուր, որ խմէ ... (207 Ասար) ...**Չորացոյ** և տուր աւուրն Ա (1) հատ ... (210 Ասար): ...**Բայց յառաջն կաթ խմեցոյ**, որ ճիճին կաթն յամէ և ի հետ **խմցոյ** զդեղդ ... (212 Ասար): **Թէ նստոյ տեղն ...ցաւի** (217 Ասար): **Պարտ է զդոքայ ի բաղանեաց կտրել**... (183 Ասար): **Սոցայ** վաղջանն գրելին... (81 Ագուլեցի): **Սոքայ** եխպայրք էին բաժանված ... (91 Ագուլեցի): **Մնաց սորայ մին աղչիկ, անունն Բանաւշահ**... (92 Ագուլեցի), **Ինչ անեն, կամ ինչ լինան, յուր տեսնում աղւոր, նայ սիրեն** (32 Քուչակ):

Վ-ՈՒ-Ի ԳՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնավորից առաջ **ու**-ն ի սկզբանե արտասանվել է **ու**, օրինակ՝ **հատուած, ստուեր, պատուիրան, զինուոր**: **Ու** հնչումը աստիճանաբար վերածվում է **v**-ի, և **ու**-ն, որպես ձայնավոր հնչյուն, ձեռք է բերում նաև բաղաձայն **վ** հնչյունի արժեք, այսինքն՝ արտասանական **ու**>**վ** փոփոխությունը հանգեցնում է գրության փոփոխության, և վերոնշյալ բառերը կարդացվում են՝ **հատված, պատվեր, պատվիրան, զինվոր** և այլն: Ձայնավորից առաջ դասական հայերենում գրվող **ու** հնչյունը նախ VI, այնուհետև XII դարում սկսում է գրվել **ւ**՝ **ւ**-ով, **և**՝ **վ**-ով: Այսպիսով առաջանում է ձայնավորանախորդ **ու**-ի գրության երեք տար-

բերակ՝ **թուի, թվել, թական**: Բառավերջում **ա, ե, ի** ձայնավորներից հետո գրվող **ւ** տառանշանը ևս փոխարինվում է **վ**-ով: Գրության նմանատիպ զուգաձևություններ են նկատվում մեր քննած ժամանակաշրջանի գրիչների ընդօրինակած մատյաններում, ձեռագիր հիշատակարաններում և միջնադարյան աշխարհիկ գրականության մեջ: Ստորև ներկայացնում ենք ընտրված համապատասխան օրինակներ:

Պօյրդ է կանանչ ծառ սաւվի... (65 Քուչակ), ...**պաղ հովն դիր թվի իւրն**... (88 ԲՍ), ...**Եւ հանց թվի թէ մեռած է**... (69 ԲՍ), **Պատվական եղբայրներ, ինձ մի» մեղադրեք** (73 Քուչակ), **Ցնծութեանք և խնդութեանք խմէք սիրով միաբանական, եղբայրք պատուական** (75 Ն.Յ.), **Նուռն և խնձօրն է պատուական** (81 Քուչակ), **Կամի ձեր մէջիսն սվիրել**... (79 Քուչակ), **Եւ աչաց չի տեսութիւն Եւ խելութիւն** (76 ԲՍ), **մեզ ողորմի տուղի հոգւոյն՝ անմահութեան հոտն բուրէ** (93), ...**Եւ թէ խառնուածն նօսր լինի**... (74 ԲՍ), **այն որ գէճ խառնվածոց լինի** (79 ԲՍ): **Եւ երբ օծվի նայ, ի բաղնեաց մէջնատունն թող կենայ**... (194 Ասար), **թվին ՌճիԲ յունվարի** ... (114 Ասար), **մտանք նավի Ջուստիցն** (55 Ագուլեցի), **ամէն երկիր տվին դինարայ դինար դիվանի** (77 Ագուլեցի), **շառաւիղ յերկինս տուեր**... (180 Քուչակ), **զայդ պագդ որ ի քո բերնէն դու տրւիր քո սըրտի կամով** (112 Քուչակ), **Շաքարն իւր լեղի թրւի** (214 Քուչակ), **վասն այնորիկ երբ քսուի, նա առաւել հաս առնու և անուշ թուի** (99 Ասար):

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԵՐԿԱՐԲԱՌՆԵՐԻ, ԵՈՒԲԱՐԲԱՌՆԵՐԻ, ԲՎԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Գրաբարյան երկբարբառները միջին դարերում ենթարկվում են արտասանական մեծ փոփոխությունների, որոնք անխուսափելիորեն հանգեցնում են ուղղագրական տեղաշարժերի: Այս ամենը հետևանքն էր միասնական գրական լեզվի ճգնաժամի և բարբառային տարբերակվածության խորացման: Ինչպես վերը

նշեցինք՝ աւ երկբարբառը վերջնականապես վերածվում է օ պարզ ձայնավորի, և այս հնչյունակապակցությունը բաղաձայնից առաջ գտնվող դիրքերում սկսում է փոխարինվել օ տառով, հիշյալ փոփոխությունը համակարգային էր, որի շնորհիվ հայերենի այբուբենում նոր տառ է առաջանում՝ Օ, օ: Ընդ որում օտար բառերն էլ սկսում են փոխառվել օ ձայնավորի միջոցով՝ *խրիդարարիք Ըստամբոլ* (160 Ագուլեցի), *խօստրով խանի գլուղն ժողովէ* (161 Ագուլեցի), *Օնոփրիոսըս գնայ խանին կաշառք կասի* (120 Ագուլեցի): Աւ>օ հնչյունական անցումն ավարտվել էր դեռ X դարում, բայց ուղղագրական շփոթը՝ աւ>օ>ո, շարունակվում է շատ երկար, բերենք բնորոշ բնագրային օրինակներ՝ *բօվանդակ երկիր տեսան* (64 Ագուլեցի), *յետով գնացի Կարապետ Ռհանայ վանքն, Ռհանու մասի գերեզմանն համբուրեցի* (108 Ագուլեցի), *գինչ ելնէ արեւն ի մօրէն* (62 Քուչակ), *յայսմ ամի յամի էր Աբուլաց մէլիքն Մէլիք-Օվին* (126 Ագուլեցի), *մահլօքս ի վար կուգի* (146 Քուչակ), *որ նօսը յարենէ լինի երեսելի է* (105 Բունիաթ), *խելօքն ի յանխելքն մօտ* (86 Ֆրիկ): Հազվադեպ հնարավոր էր նաև օ>ու անցումը կամ ու>ո՝ *Առաջ գնացի Ուշական, մեր Հայոց թարգմանիչ, գիւտ գրոց Մեսրոպի վարդապետի գերեզմանն համբուրեցի* (108 Ագուլեցի), *ողարկեց Սէվանու անապատն* (128 Ագուլեցի):

Ու ձայնավորից կազմված հնչյունակապակցություններում ու-ն փոխարինվում է կամ բաղաձայն վ-ով, կամ ւ-ով, այսպես՝ ուա>վա/ւա գրչական երկբարբառակերպ տարբերակներով՝ *որ առնու լվացած սրպիկ* (167 Գրիգորիս), *գիշերուայն բնութիւնն հով է, քան ցերեկվանն* (104 Ասար), *զկերակուրն կեսօրվան ժամին տուր* (215 Ասար): *Ուի>վի/ւի՝ ուռենայ ոտվին* (167 Գրիգորիս), *թէ կրակըն ձգեն սրբվի* (190 Ասար), *փորոքնին կալուի և լցուի, կալուածքն կոյ բացւի, կալուածնուն բայցւիլն զօդուածքն շարժէ* (104 Ասար), *նա կու քաշվի...* (104 Ասար) *որ ի վզին է՝ լցվին* (106 Ասար), *մէջքն բացվի* (223 Ասար), *աւգտէ աջացավի և գլխացավի* (120 Ասար), *կասի ծվի սպիտակուցն* (231 Ասար): *Ուե>վե/ւե(է) բժշկութեան արուեստն յաւելի առաւելութիւն ունի* (112 Ասար), *առ հինայ և քացխվ շաղվէ* (119 Ասար), *ի բաղնիքն ջրով շաղվես* (191 Ասար), *շատ են տվել* (233 Ասար), *ուո>վո/ւո՝ ծվոցն կաշոյն լինի* (167 Գրիգորիս), *ճըճորիք*

մտանեն յինքն (Ասար 112), *աղվոր յիմանայ զհիւանդին պտքն* (114 Ասար):

Իւ և եւ երկբարբառների զուգահեռ կիրառությունները շարունակում են հանդիպել տարբեր հեղինակների երկերում, բայց նկատվում են համակարգային փոփոխություններ՝ կապված այս երկբարբառների արտասանության տարբերակների հետ: Այսպես՝ իւ-ը տեղ-տեղ փոխարինվում է իու կապակցությամբ՝ պատճառն ակնհայտորեն ւ-ի վերածումն է ու-ի¹: Ունենք նաև իւ>ոյ սակավադեպ հնչյունափոխությունը, զորօրինակ՝ *հարիր>հարոյր, արին>արոյր, նիւք>նոյք, ալիր>ալոյր*:

Միջնադարյան գրականության մեջ վկայված են նաև իւ /եւ երկբարբառների պարզեցման դեպքերը, որոնց հետևանքով իւ/եւ-ը վերածվում էր ի ձայնավորի, օրինակ՝ *թարթամութիւնք այսր աշխարհի* (122 Պ.Ղ.), *ե ձայնավորի՝ ջուրն սպառի եւ եղն մնայ* (180 Ա.Ա.), *ու ձայնավորի՝ աղբուր տեսայ* (63 Ագուլեցի):

Այ գրաբարյան երկբարբառը միջին դարերում, թեև ենթարկվում է հնչյունափոխությունների, այդ թվում պարզեցման, բայց նաև ընդլայնում է իր գործածության ոլորտները: Այ երկբարբառը միջին դարերում ամենատարածվածն էր, որովհետև հողակապավոր բարդությունները կամ ածանցավոր բառերը միջին հայերենում, ինչպես նաև վաղ աշխարհաբարում սկսում են կազմվել այ հնչյունակապակցությամբ, բացի այդ՝ գրաբարում ա ձայնավորով ավարտվող այն բառախմբերը, որոնք վերջում յ չէին ստանում, գերճգրտման հետևանքով սկսում են ստանալ յ, ինչպես օրինակ, անձնական կամ ցուցական դերանունները, այսպես՝ *կարմրայգոյն լինի, նայ յարեան մաղձէն է, և դեղնայգոյն թէ լինի, խարտէ մաղձէն է, եթէ թուխ, սև մաղձէն է, և թէ սպիտակայգոյն, նայ ի պղղամէն է* (167-168 Գրիգորիս): *Յողնայշարն* (175 Գրիգորիս) *նայ լցվին վնասայկար մաղձովս* (176 Գրիգորիս), *լուսինն հեռանայ ի տառայսանաց աստիճանացն* (201 Գրիգորիս), *պատահէ իւրն վերայբերութիւն* (211 Գրիգորիս), *որ է հաւկոյր, սայ է, եթէ շարաւն պաղ լինի և թանձրայգոյն նայ ի Կ. օրն ապայ պայթի* (210 Գրիգորիս), *գլխայցաւութիւն վատ նշան է* (210 Գրիգորիս), *լուսայմուտս* ժամ կայ արծակնայ, *թվենայ թէ*

¹ Տե՛ս Ա.Վ. Գյուլբուղայան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր, 1973, էջ, 157:

կու ծիծաղու (75 Գրիգորիս), *Մայ տաքնա և հանգչի և զանուշ թվի* (99 Ասար), *դայ չէ յունեքէ ծնունդ (49 Կեչառեցի), ու զթողուլ Մայ ափսոսեցաւ* (53 Կեչառեցի), *Մայ թուղթ ու թանք ուզէր* (56 Կեչառեցի), *ամենն մեծայմեծ մարդ են* (99 Ագուլեցի), հետ **սոցայ** գնացի (85 Ագուլեցի): Անգամ գրաբարյան **առնել** բայը դառնում է **այնել՝ որ աստված այնէ մեզի վճար** (91 Ֆրիկ):

Այ երկբարբառը հատկապես բառասկզբում, բայց նաև բառամիջում պարզեցվում էր՝ վերածվելով է-ի, այսպես՝ *ինձ քաղցած թողել և սիրտս էրել* (155 Ն.Յ.), կամ դառնում էր **ա՝ սիրէ զադ երեք բանիկդ** (99 Ֆրիկ), քանի **մարն** զիս բերէր (140 Քուչակ), **ան գէշն պագիկ մուզեցի...** *ի՞նչ միննէք կընես աստ գիշուն* (196 Քուչակ), *ի վերայ կապէ իւր փետովն* (229 Ասար):

Ոյ երկբարբառը հիմնականում պարզեցվում է՝ վերածվելով ու-ի, արդեն անկախ շեշտից, այսպես՝ *նոր գուժ և մահ յաշխարհն մըտին* (217 Ա.Սյունեցի), *որպէս կապուտ քարն* (213 Ասար), *երեսին գունն կարմրացնէ* (225 Ասար), *աչաց լուսն աւելցնէ* (187 Ասար), *այս գունս լինի, որ արնագունն կըտոր՝ մոխրագունն երևի* (187 Ասար), *ծաղկանց դաշտերն գունըզգուն* (174 Կ.Ե.):

Եա>ե երկբարբառը, որպես կանոն, պարզեցվում է՝ դառնալով **ե**, հատկապես անցյալ կատարյալ ժամանակի եզակի թիվ 3-րդ դեմքում, զորօրինակ՝ *Դաւիթ վկայեց* (66 Կեչառեցի), *թուղթ գրեց առ Աղեքսանդրին* (59 Կեչառեցի), *մի քանի օր պահեց, ողարկեց Սէվանու անապատն* (128 Ագուլեցի):

Միջին դարերում գրաբարյան եռաբարբառները հիմնականում պարզեցվում են՝ վերածվելով երկբարբառների կամ երկհնչյունների, ընդհուպ մինչև ձայնավոր՝ ույ>ոյ>ոյ - սիրել-ույ>սերելույ>սիրելու, եաւ>եւ – բարեաւ>բարեւ, եայ>է – հրեայ>հրէ, քրիստոնեայք>քրիստոնէք և այլն:

Պետք է նշել միջնադարյան հայոց ուղղագրության հույժ անմիօրինակությունը, նույն հեղինակը հաճախ նույն տողում կարող էր նույն բառը գրել երկու կամ երեք տարբերակներով, այս հանգամանքն աներկբա ապացուցում էր միասնական գրական լեզվի, ընդհանուր կրթական մակարդակի անկումը և ժողովրդախոսակցական մի քանի լեզուների՝ բարբառների համաժամանակյա գիրկընդխառն գործածությունը: Փաստացի դասա-

կան ուղղագրությունը խոր ճգնաժամի, հեղաբեկումների մեջ էր, որը դեռ երկար պիտի շարունակվեր:

Ինչպես նշում է Յր. Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմության» մեջ դեռևս Ե-Թ դարերում ձայնավորներին և ձայնորդներին հաջորդող դիրքերում ձայնեղ բաղաձայնները խլանում էին, իսկ խուլերը՝ ձայնեղանում: Բանավոր և գրավոր խոսքերի միջև ճեղքվածքն աստիճանաբար խորանում էր՝ եռանկյունու տեսքով, որի սուր ծայրին Ե դարի գրաբարն էր²: Այդ ճեղքվածքն առավել խորանում է ԺԱ դարից սկսյալ՝ թուրքական ասպատակությունների և դրանց հաջորդած տիրապետության ժամանակ, հայոց թագավորության վերացման շրջանում: Գիշտ է, ժամանակի ուսյալ այրերը փորձում էին զգուշացնել բաղաձայնների ուղղագրական շփոթից: Ինչպես Ս. Գյուլբուղադյանն է նշում հայերենի ուղղագրության պատմությանը վերաբերող իր ծավալուն հետազոտության մեջ, Անանուն քերական մեկնիչը, ելնելով բաղաձայնների ուղղագրական շեղումներից, հիշատակում է այն լծորդությունները, որոնց գրությունը գրիչները հաճախակի են շփոթել, 1. բ, պ, փ, մ, 2. գ, կ, ք, խ, 3. դ, տ, թ, 4. գ, ս, ձ, ց, 5. ծ, չ, ջ, 6. լ, դ և այլն, որովհետև դա փոխում է բառի իմաստը³: Բայց ժամանակը և բարբառային տարբերությունների խորացումը կատարում էին իրենց գործը. սկսում է տարածվել բաղաձայնների 2-րդ ձայնադարձը, խուլերը (պ, կ, տ, ծ, ճ) վեր էին ածվում ձայնեղի (բ, գ, դ, ձ, ջ), իսկ ձայնեղները (բ, գ, դ, ձ, ջ)՝ խուլի (պ, կ, տ, ծ, ճ), բայց երբեմն նաև՝ շնչեղ խուլի (փ, ք, թ, ց, չ), վերջին դեպքերը գրության մեջ առավել լայնորեն էին հանդիպում:

Բերենք այս անցումները վկայող տարբեր օրինակներ՝ ...չուրն արհնեց, խաղաղութամբ (147 Ագուլեցի), *պօյրդ է կանանչ ծառ սալվի...* (65 Քուչակ), *գոյնն լինի սպիտակ կամ մքզոյն* (33 Գրիգորիս), *մեր եխպայր Սիամոն* (94 Ագուլեցի), *ապայ դէքտեմբերի էունն առ Աստուած փոխեցալ* (95 Ագուլեցի), *կռիւ էր երեւանայ բերթին վերայ* (95 Ագուլեցի), *մինչի կէսն բարցրաւ* (113 Ագուլեցի), *սոքայ Աքուլիս կացան* (112 Ագուլեցի),

² Տե՛ս Յր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2013, մաս II, էջ 476:

³ Հմմտ. Ս. Գյուլբուղադյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 67:

Ովանէս անվան եկեղեցին ըսկիսպն արարին (130 Ագուլեցի), նավն ետ դարցնէ, այր ոմն մեծատուն, անունն խոջայ Ավաք (85 Ագուլեցի), չունենաս պացխուն դատողին (81 Ֆրիկ), կոզալ մի հազնիր կապուտ, շատ կարմունճ կապեր գետերուն (50 Քուչակ), կթխակ մի գինով լըցած (148 Քուչակ), եկին ու խապար բերին (194 Քուչակ), գիւտ գրոց Մեսրոպ վարդապետի գերեզմանն համբուրեցի (108 Ագուլեցի):

Եւ միայն ժԸ դարից հետո լեզվական այս խառնակութիւնը, ճգնաժամը զարմանահրաշ մի ուժով հաղթահարվեց, և կատարվեց նորոգության յուրօրինակ «դարձ ի շրջանս իւր», դարձ ի գրաբար, այս երևույթը գունեղ բնորոշում է մեր լեզվի պատմության գիտակ Արսեն Այտընյանը. «Այնպիսի ժամանակ ուր մտաւոր կրթութեան եւ ուսումնասիրութեան դեռ աղոտ ու մթնշաղ, բայց ճշմարիտ այգ մը ծագած էր արեւելք, եւ գիր ու գիտութիւն ընդհանրանալու սկսած, այնպիսի պարագայից մէջ, ուր բերրի ու հիւթեղ գրաբարը շատոնց անպտուղ ու ցամաք կերպով կը յածէր ժողովրդեան սահմաններու մէջ, եւ վերջապէս աշխարհաբար գրելու հարկն ու պատշաճութիւնը կը ստիպէր, ստիպողական կըլլար նաև նոյն կենդանի լեզուին ընդհանուր նորոգութիւն մը, եւ արդէն պատրաստական միւթն ու կերպը ամենայն առատութեամբ կը մատակարարէր գրաբար»⁴: Լեզվական նորոգության այս հետաշրջութիւնը, որը հստակ դրսևորվեց հատկապէս ուղղագրության մէջ, բարձր է գնահատել նաև Զր. Աճառյանը՝ այն անվանելով լեզուների կյանքում չտեսնված մի երևույթ, որը մեզ համար մեծ բարիք եղավ. «Այդ միջոցով 1) մեր զանազան բարբառները գոնե գրականության մէջ ի մի ձուլվեցին, և հայության երկու հատվածները միայն մի մի գրական լեզու ունեցան: 2) ժամանակակից հայը չկտրվեց անցյալից, և Ե դարից սկսած մինչև այսօր՝ հայերեն բառերը գրական լեզվի մէջ անփոփոխ պահեցին իրենց պատկերը: - Գրաբար և աշխարհաբար ուղղագրութիւնը նույնն է»⁵: Իհարկէ, այս լիարժեք նույնութիւնը վերաբերում է մինչ արեւանական ուղղագրական բարեփոխումների բարդ շրջանին:

⁴ Արսէն Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 237:

⁵ Զ. Աճառյան, Գայոց լեզվի պատմութիւն, Եր., 2013, էջ 476:

ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԿԱՅՈՂ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐ

Յովհաննու Որոտենցու
Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի,
XIV դար
Երևան, 1956 թ.

Բնաբան. Միշտ զօրութեամբ միւթն հասարակ:

Լուծում. Այս է նմա յատուկն, զի լինելն զօրութեամբ որոշէ գնա յընթիւնը, որ է ներգործութեամբ, իսկ լինելն հասարակ որոշէ գնա ի մասնականէն, իսկ զօրութեամբն և ներգործութեամբն ի վերայ տարբերութեան երկու կերպիւ է իմանալ. նախ, զի յորժամ խօսք ոք՝ ներգործութեամբ է, զօրութեամբ ունի զլռելն, և յորժամ լռէ ներգործութեամբ, զօրութեամբ ունի զխօսելն, այսպէս և գերկոտանին և գսեաւն և զսպիտակն իմացիր: Երկրորդ, զի որպէս իրն, որ ի փոփոխման է, ոչ ամենակն զօրութեամբ և ներգործութեամբ է, այլ յերկոցունցն ունի, նոյնպէս և տարբերութիւնն ունի ինչ ի գոյացութեան, որպէս վերոյ ցուցաւ երեք կերպիւ, և ունի ինչ ի պատահմանէ. նոյնպէս երեք կերպիւ՝ ա) զի որակ է, բ) զի յորպիսի ինչէնուն է, գ) զի յետ գոյացութեանն լինի: Իսկ որ ասէ, թէ ոչ իսպապէս գոյացութիւն է տարբերութիւն || և թէ մասն գոյացութեան ի Բնաբանականսն ուսցուք:

(Որոտ, 56)

Բնաբան. Ամենայն որ չափի երկակի կամ յոգնակի չափի:

Լուծումն. Որպէս այն, որ բաժնի կամ յերկուս բաժանի կամ ի բազումս, նոյնպէս և կանգունն ընդ չափելն լինի երկակ և գնոյնն կրկնելով՝ բազմանայ: Եւ երիւք ցուցանէ զբանս քանակ գոլ. նախ, զի բանն չափէ զամենայն ինչ. երկրորդ, ինքն չափի ի փաղառութեանց. երրորդ, զոյգ է և անզոյգ: Եւ զի մասունքն ոչ յարակցին տարրորոշ քանակ, այսպէս ապա բանս ըստ ձայնին

որակ է, և ըստ չափոյն քանակ, ըստ մասանցն տարրոշ, ըստ բոլորին շարունակ:

(Որոտ, 82)

Բնաբան. Թուի թէ ընդունի ըստ երկրորդաց ոմանց գոյացութեանց:

Լուծումն. Ձերկրորդ գոյացութեանց մասնաւորսն ասէ, զի ոմն մարդ անհատն է և ոմն գլուխ անհատին մասն, որ են առաջին գոյացութիւնք, նոյնպէս և երկրորդ գոյացութեանց, մարդն և արջառն յոլովքն են և ձեռն և գլուխն մասնաւորք մնա: Եւ զայսմանէ կարծեն առինչ գոլ, զոր ինքդ յառաջիկայսդ լուծանէ. նախ, զի սահմանն փոխտ և ապա իսկապէս ցուցանէ և դնէ հասարակ կանոն և յայտնի, թէ ամենայն իր, որ ինքնըստինքեան ասի ոչ է ասինչ է ամենայն իր որ ըստ ինքեան ոչ ասի, այլ ի յայլմէ ունակութեանն է՝ նա առինչ էր:

Բնաբան. Բայց եռանգունին և բոլորակն ոչ ընդունին գյաւէտն և գնուազն:

Լուծումն. Եւ զայս ցուցանէ երկու կերպիւ. նախ, զի որ ընդունի զսահման բոլորին կամ զքառանգիւնոյն, թէպէտ ոմն մեծ և փոքր, առաւել և նուազ ոչ են, զի զմի և զնոյն սահման ունին կարի մեծ բոլորակն և ամեննին փոքրն, նոյնպէս և մեծ եռանգիւնին և փոքր: Երկրորդ, և որք ոչ ընդունին զմի սահման, ոչ են միմեանց առաւել և նուազ, որպէս եռանգիւնին ոչ ընդունի զսահման բոլորակին և ոչ բոլորակն զեռանգիւնոյն, վասն այն միմեանց առաւել և նուազ ոչ են:

Յայսմանէ երկի մեզ բանս այսպէս՝ եթէ ոչ ինքն ինքեան է յաւէտ և նուազ և ոչ ինքն այլոյ, զի ասելովն, թէ որք զմի սահման ընդունին ցուցանէ, թէ ոչ է ինքն:

(Որոտ, 188)

Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արիեստի, XVI - XVII դդ. Երևան, 1993 թ.

Գիտացիր, որ քերուիլն ցաւ է, որ իր ընծայումն ի սուր և ի յաղի խլտէ (արյուն, լորձ, սև կամ դեղին մաղձ) ընծայի: Եւ յորժամ մարդ, որ զինքն քերէ, նա գաղտ շնչահանքն բացուի և խլտն հալծի և ելնէ և քերուիլն խափանի: Եւ յայն մէկ հեղն, որ քերուի անուշ թուի մարդոյն, զի այն աղի և սուր խլտն ելաւ քերվելովն և թէ այլ քերվի նա հանց անուշ չը թուի (97, ԺԶ):

Այսպէս որ ԼԵ (35) տարին կու սկսնու ալևորութիւն, որ գիջութիւնն և տաքութիւնն երկուքն այլ կու պակսի: Եւ ի Կ (60) տարուն յետև ծերութենէ և յետև այսոր զայն տաքութիւնն և գիջութիւնն, որ ի ծընընդենէն բերել կու սկսնու և պակասել և հատանել: Եւ այս պակասիլն և հատանիլն անճարակ է և պիտի, որ լինի և այնպէս հատնի այդ տաքութիւնդ, որպէս որ ճրագին եղն հատնի, ճրագին՝ նայ լոյսն կու վատուժի: Սոյնպէս լինի և մարդն, յորժամ պակսի բնութիւնքն և այնոր համար, որ զբնական գիջութիւնն զորն օդն է պակսեցուցել և զորն բնական տաքութիւնն ժամանակաւ մսխել է, որպէս զճրագի եղ վառելով հատել է և պակասել է և զայսմ պակասութիւնս կերակուր ուտելով մարդ ի տեղն չկարէ բերել: Ձի այն չաքն, որ կու պակսի նայ այն չափոյն փոխան չի լինիր ի կերակրոցն, որ զնորայ պակասութիւնն կարողանայ լմնցել (ԼԹ, 108):

...Եւ ապա առ չոր կարմիր վարդ և մուռ և դալար մրտենոյ տերևի ջուր և աղայ խոշոր գվարդն և մուռն և խառնէ ի մրտենոյ ջուրն և լից ի վրա գինի, որ ծածկէ և լից ի վրա քամած ձէթը և եփէ որպէս յառաջն, որ զջուրն հատնի և մնայ ձէթն և քամէ կրկին, որպէս ի վերն արարեր (Ի, 136):

Առ կիր Ծ (100) գրամ և զառիկ (մկնդեղ) մաղած ԻԵ (25) գրամ և շաղէ գարեջրով: Եւ յերբ օծվի նայ, ի բաղնեաց մեջ-նատունն թող կենայ և ձեռօքն քթայ ընդ ինքն մինչ գիտենայ, որ կիրն գործ արաւ ընդ ինքն և ապա թող լաւանայ (ՂԳ, 194): ...Առ

քըթու խնծոր և ծեծէ ի հաւանն և ձգէ ի գլուխն և ի ճակատն: Եւ կամ առ հինայ և քացխով շաղէ դիր ի գլուխն: Կամ առ աֆիոն (խաշխաշ) և գաֆրան (քրքում), վարդի ջրով տրորէ և օծ: Այլ յունապ եփէ ջրով և հինայ շաղվէ և դիր և ամէն դիմօք հով դեղեր և հով կերակուր ի բան տար օգտէ (ՃԳ, 202):

**Բունիաք Սեբաստացի, Գիրք բժշկութեան, XVII դ.
Երևան, 1987 թ.**

Աքթա (ուղեղային կաթված) ինքն ցաւ մի է, որ մարդուն կամ ի նստելտեղն կամ ի քալելու ժամն դաֆիլ (հանկարծ) լինի մեռածի պես. պատճառն որ շիրեանին երկնին, որ ի սրտէն ի գլուխն կելնէ այնոց ճանապարհն պեղծ պալղամ կու լցվի, զհարաքաթն կու խափանէ սրտին երկնուն:

Նշանն այն է, որ յերեսն պաղ, անձն պաղ մեռելի պես է, բերնէն ջուր շատ երթա, ի քթն գիծութիւն շատ գա, ըխտաւորի պէս չի խռկա, այս ցաւս դժար ցաւ է, որ հարաքաթ-ի յազիղան որ քրտնի այնոր սապապն է, որ տեղն ի սիրտն է, որ տաքութիւն կու կապէ (Թ, 69):

Պատճառ այրած սաֆրային (դեղին մաղձ) այս է, որ սրանա և այրի և զօղվածին կերակուրն այլ այրի և սփռի ամէն անձն և աւիրէ զբնութիւնն:

Նշանն այն է, որ յառաջն անձին կաշին սևնա և աղի լինի և ճղքտի և դեղին ջուր ելանէ և խռչակն բռնվի և շունչն կարճնա և երեսին գոյնն մթնա:

Դեղն այն է, որ յառաջն բ (2) թէն ...արիւն առնես և ոտիցն երկնուն և ի ճակտէն այլ: Եւ...ամռան աւուրքն ի բաղանիս մտէ, որ աղէկ լինի արիւնն և զամէն հով և զգէջ ձիթեր ի կանանց կաթն խառնէ և օծէ և տուր զայն իրվին, որ սավտա լուծէ և տուր կաթնակեր գառին միս խորված և թէ ցաւն հին և ամուր լինի՝ դժար է (ԽԼ, 119):

Ականջն, որ ի ցրտոյ ցաւի. սխտոր կեղևէ և հոռոմ ձիթով

եռացոյ և ի յականջն կաթեցո: Որ ի ջերմութենէ ցաւի. քացախ և վարդի եղ խառնէ և կապուտ բրդով յականջոյ դիր: Որ ի ցրտո ցաւի և կամ ձայն ատէ. նշի ձէթ և կանեփատի ձէթ սագու ճրագով խառնէ և եղկ (տաք) կաթեցո: Որ խաւակ լինի առել՝ աւելկի տակ և վարդի եղ խառնէ և ձվի դեղնուց և բամբկով ի վրա պորտուտ դիր. արագ հանէ զջերմութիւնն: Առ գարէ ալուր և դգալ ու կէս ի շող ջուրն ատ և առ (ԺԷ, 79):

**Ֆրիկ, Տաղեր
XIII- XIV դդ.
Երևան, 1982**

Հազար թէ հանց շընորիք ունիս քեզ մէկ Սուրբ Գիրք այլ պիտենայ,

Որ այս կենացս ողջոյն ասես, մինչ չէ եկեր մահն ի վերայ:

Ես աղաչեմ զամենեսեան, ով զիմ ողբանքս լըսենայ,

Թող չը խաբի յանցաւորէս՝ սորա աղէկն ի բան չի գայ:

Ով որ յայս կեանքս է խիստ ուրախ՝ յանդէնըն շատ ի լաց կենայ,

Աստուած օրհնէ զայն կարդացողն, որ իմ խրատս առ ինք մընայ:

Աշխարհս ամէն սուտ կու դատին, ես եմ գըտել հանց քիմիայ,

Ոսկի և՛ արծաթըն զայն շարժէ, զի յիշատակ այս կու մընայ,

Թէ խելք ունինս նա՝ հանց կենանք, զինչ աստուծոյ սիրտն ուզենայ՝

Սուրբ եւ անբիծ եւ անարատ, որ լզբարին յերակ հոգայ:

Յայնուն լինինք մարդ կատարեալ, որ նենգութիւն ի մեզ չ՝ մնայ:

Այն է գլուխ ամէն բանի, որ զամենայն մարդ սիրենայ:

Զինչ ըզփորձած ոսկի լինի, որ ի բովէն ահ չունենայ,

Օրհնեալ անունն ըստեղծօղին, որ հող մարդոյս խօսք լինենայ:

Աստուած օրհնէ զայն կարդացողն, որ ըզՖըրի՛կըս յիշենայ.

Ինքն այլ յիշուի ողորմութեամբ, երբ Գաբրիէլ փողով
ցընծայ:

Մենք գոհանամք զողորմածէն, թ' ի մեղաւորս ո՞նց կու
զըթայ,

Որ զանարժանս արժանացոյց, որ հանց գոհար ի շար, կու
տայ,

Փառըք փառաց թագաւորին, որ մեր մըտացըս լոյս կու
տայ,

Զինչ արեւու շողն ի ջրին ի մէջ հոգոյս կու թըռուրոյս:
Ով որ թախսիր խելաց առնէ, թող անհոգ ի քուն չի կենայ,
Թէ չէ նա՛ գողըն մըտանէ եւ աւերէ զտուն ու գընայ:
Ո՛չ երեկոյ, ո՛չ մէջ գիշեր զայն մարդն իսկի ո՛չ գիտենայ,
Տանուտէրըն արթուն պիտի, որ գողին ա՛ւար նա չի տայ:
(Ֆրիկ, 32-33)

Զինչ դըժոխոց շինուածք, որ կայ,
Հանց խորտակեաց աստուած ըզնա,
Որ Բելիար դառըն կու լայ
Թ' այս ինչ բանի հանդիպեցայ:
Զայն երախտիքն ո՞վ մոռանայ,
Զոր նա՛ ունի ի մեզ վերայ.
Զամէն բարիք է մեզ տուել,
Ով կու լըսէ իմաստնանայ:
Պաշտել պիտի զաստուած իւր նա,
Բերել պիտի խելք ի վերայ.
Հինգ զգայարանքս, որ առ մեզ կայ,
Զորս բընութիւնս՝ որ իմանայ:
Թող չի խաբէ զմարդ սատանայ,
Որ զօրն ի բուն հարբած կենայ,
Գիշերն անհոգ ի քուն կենայ.
Ծառայելու ժուկ չէ նորա:
Եղուկ նորա, որ ո՛չ զըղջայ,
Հանց փաթերակ զինչ որ անդ կայ,
Ոչ ուն վերայ իսկի չի գայ
Վիշապ որդունքըն կու եռայ,
Կան ու մընան, թէ ե՞րբ կու գայ,

Որ մենք անենք մեզ թանաշայ,
Անդ ժողովեր ենք հանգամայ,
Նոցա ժանեացն ո՞վ դիմանայ:
Ով ըզմեղաց հուրն իմանայ,
Թող ըզհոգոյ ակըն բանայ,
Սըրտի ակա՛նջով լըսէ նա,
Զինչ որ տուել տէրըն նորա:
(Ֆրիկ, 44)

Զքեզ ո՞վ իշխէ փորձել, աստուած,
Կամ զինչ խելաց է ընդունակ,
Զայս դու վաղուց՝ իր խոստացել,
Որ Ադամայ ասաց հրեշտակ:
Յորժամ ելաւ նա ի դրախտէն,
Ելաց զարեան գետն ու զվըտակ,
Այն որ յաթոռ փառաց նըստի,
Պիղատոսէ առեր ապտակ:
Գան ընդունել յանարժանից,
Թուք եւ ապտակ փըշոց պըսակ,
Դու բարձրացար ի Գողգոթայ՝
Խաչակցեցար ընդ աւազակ:
Ի՛ վերայ խաչին տարածեցեր,
Տե՛ր, ըզբազուկ քո հըզօրակ,
Բեկեր ըզմէջքն սատանայի,
Արեր զ՝ դըժոխքըն աւերակ:
Զ՝ բանտարգելեալքն ազատեցեր,
Ահեղ գոչմամբըդ համարձակ,
Աւանդեցեր առ հայր զհոգիդ,
Առ քեզ տարար դու զաւազակ:
(Ֆրիկ, 68)

Յորժամ հայիոյք զաղքատն ու դըժար խօսօք կըռուիք,
Ելնէք յաստուծոյ աչացն, և՛ ի մեղաց դաւթար գըրուիք:
Յեզուց, երբ ասէ աստուած, ես եկի՝ տառապելիս չըտվիք,
Ու զինչ Ղազարոս ի դըռ՝ ուլին ընկած ու յիս չ՛հայէիք:
Զօգտէ փոշիմնիլն յեզուց, քե՛զ ասեմ, լըսէ դու Ֆըրիկ,

Ձինչ որ մեծատունն եղաւ՝ աներես ու խիստ անհարկիք:
Երբ դուք հայիք ի հուրըն ի գատէ՝ լուկ կու պապակիք,
Յայնժամ չի թափէ ըզծեզ ո՛չ բեհեզ եւ ո՛չ ծիրանիք:
Չորըն կեր ու խում առնէք, գուսանով երթայք՝ ըզբաղիք,
Չքարոզըն՝ տ՛նագ առնէիք, նաեւ բարկ-բարկ ծիծաղէիք:
Յորժամ դատաստան լինի, գայս յիշէք լ՛ հոն նըւաղիք,
Չօգնէ կերուխումն ի հոն եւ լինիք ձախակողմն լալիք:
Գեմ վասն աղքատաց եկաւ միածինն, որ դուք գիտենայք,
Երեկ եւ զպակասն ելից, չասաց, թէ դուք թերանայք:
Յառջեւնիդ փորէք դուք հոր եւ անձամբ ի մէջն անկանիք,
Տամէք զ՛մեղքն յաստուած հանէք, դուք անմեղ ի գատըն
կանգնիք:
Քաւել թէ երթանք առ կոյսն, միածինն ի յոռքն անկանինք,
Որ նա բարեխօս լինի իւր որդոյն, որ մեք խալըսինք:
Գիտեմ չի թողու աստուած մէկ հետէ, որ մեք կորընչինք,
Զիւր կենդանագիրն յիշէ, իւր ծնօղին առնէ նա հարկիք:
Հազար թէ իրաւ է բանս, դուք անհոգ ի քուն մի՛ լինիք,
Զարթիք ու պատրաստ կացէք, դժոխաց որդիք մի՛ լինիք:
(Ֆրիկ, 85)

Չաքարիա Ագուլեցու
Որագրութիւնը, 1630-1691 թթ.
Յերեվան, 1938

Յամի ՌՃԴ յունվարի գունն եւ Չաքարիայ ջրաւրինիք
Իզմիր արարի Աստուծով
Փետրվարի իեունն Իզմիր եւ Չաքարիայ բուն բարեկենդան
արարի:
Մարտի գունն եւ Չաքարիայ որ Իզմիրէն գուս եկի, որ
գնաք Բուրսայ: Հենց որ Իզմիրէն դուրս եկի, սելաւի ըռաստ
եկինք: Շամ հալ քաշեցի: Աստուած զմեզ փրկեաց ողողի տա-
նելու:
Մարտի ժըունն եւ Չաքարիայ եկի Բուրսայ Աստուծով: Թվի
ոճգ մարտի իեունն Էջմիածնունն որ Փիլիպոս կաթողիկոսն

վախճանեցաւ, եղաւ սուրբ Հռիփսիմէ եկեղցին ի կողմն յուսու-
սային: Սայ էր Կ ամաց: Սորայ փոխարէն աթոռ նստաւ Հակոբ
կաթողիկոսն Ջուղայեցին:
Ապրիլ թունն եւ Չաքարիայ որ Բուրսու դուս եկի:
Ապրիլ ժեունն եւ Չաքարիայ գատիկ Դարախչիլարունն
արարի: Ետհենց գատիկ մարդ ոչ անէ. գերայ Գեվիու բարցին
գատիկ կիրակի օրն, հենց որ տվինք բելն Սարուջայ, թօքմիշ
ելան կարաւանի վերայ. բ մարդ մեռաւ, է, ը մարդի ժարայ տվին:
Մայիս Իբունն եւ Չաքարիայ եկի Թողաք Աստուծով:
Մայիս իգունն Թողաք եւ Չաքարիայ համբարձում արարի:
Մայիս լունն եւ Չաքարիայ Թողաթու դուրս ելայ Աստուծով:
Յունիս ժգունն եւ Չաքարիայ եկի Առզըուն Աստուծով:
(ՉԱ, 45)

Թվին ոճժը մայիսի ժթունն Ագուլիս այսօր Ագուլաց ի տուն
խիզանով գնացինք: Գաղայ նահատակն ուխտ: Ես Չաքարիայ
այլվի խիզանով յետ սոցայ գնացի, ուխտ արարաք:
Մայիսի իունն եկինք Ագուլիս. օրն համբարձում:
Թվին ոճժը յունիսի ժգունն Ագուլիս Վերի թաղէն այր ոմն
մեծատունն, անունն խոջայ Ավաք, որ այսօր առ աստուած փո-
խեցաւ: Քանզի շատ մարդի վկայութենովն իմացաք, որ սայ ի
հօրէ, ի մօրէ էթիմ էր, որ բնաւ ունչիչ չունէր սայ Աստուծոյ
տուածէն: Այնչափ տվեց Աստուած, որ թէ տուն, թէ մուլք, թէ
աջիաս, թէ փող, գո թումանի տէր դառաւ: Սայ էր հ ամաց: Սայ
մեռաւ, ոչինչ տարաւ, բայց միայն ի գագ կտաւ: Ով մահկանացու,
մի շատ ազահութիւն անիլ. Վերջն այսպէս կու լինի. այս է:
(ՉԱ, 85)

... եւ Չաքարեայ այսօր Աքուլիս ջրաւրինէք արարի: Դ
մահլէն ամէն ժողովեցին Վերի թաղի եկեղեցին, զգեստա-
վորեցին, մեր վանքի առաջնորդ Պետրոս վարդապետն զգեստա-
վորես. մինչի ծ, կ շապիք յաքնող կեր: Նաղրով, զոնով զնացին
Շաբի կաւն, ջուր արհնեցին. լաւ, արև օր: Այսմ ամի Աքուլաց
հաքիմն էր աքուլեցի Մուսաբէկենց Մուսաբէկն: Սայ ուղարկեց,
Օրդովարայ շխալիսլամն, գ, Ե մեծ մարդ կանչեց, ինքն, թէ այլ
քուրդեր նստան, չուրի ջուրն արհնեց, խաղաղութեամբ, սիրով

ամեն վե կացին, իւրենց⁶ տեղ գնացին: Թէ Օրդուվարայ քուր-
դերին, թէ Աքուլաց քուրդերին խարջ չառին հայերէն: Միայն մին
աման էմիշ, գ քալայ շաքար տարան. Այս էր խարջն:

(ՁԱ, 147)

**Նաղաշ Յովնաթան, Տաղեր
XVII-ից XVIII դդ.
Երևան, 1983**

Գիտեմ, որ դու, քանց զիս, սիրոյ թամահ ես,
Նռներըդ հո՛ղ կու դառնայ, է՞ր պինդ կու պահես,
Թող համբուրեմ, օրհնեմ, հոգով զարդարվես.
Ես եղէ քեզ հէյրան,
Դու՛ մարալ-ջէյրան:

Ձինչ ձուկն՝ ջրէն դուրս-ես կու գամ տապակ,
Դու էլ իմ սիրովն ծարաւ ես, պապակ,
Ապա է՞ր կու մընամք մեք միմեանց փափաք.
Ես եղէ քեզ հէյրան,
Դու՛ մարալ-ջէյրան:

(ՆՅ, 37)

Յաւուրս գարնան եղանակին
Փթթեալ ծաղկեցաւ այգին,
Հնչէ քաղցր ձայն տատրակին.
Ելէ՛ք, եղբարք իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և հարկանելով:

Որպէս որ երամս աղանեաց
Խորհուրդ արարէք հետ միմեանց,
Ժողովեցէք զգինս գառանց,
Ձենէ՛ք, եղբարք իմ, ցնծալով,

Ուրախութեամբ և պարելով,
Ծափս-ծափի հարկանելով:
(ՆՅ, 79)

Գինին որ հասնի՝ անուշ է,
Խմենք, անենք ուրախութիւն.
Կանչել տամք տէր Յարութիւն[ն],
Դատարկացնենք գինւոյ բունն:
Կասեք.-Հո՛-հա՛յ, հրէն շունն,
Վեցկին եկաւ, մտաւ տունն,
Ղոչի չի՛ տայք՝ կոտրէք սիւնն,
Վեր ընկնի կոտրի պուրղունն,
Հիւանդանայ, քաշվի գոյնն,
Էլ չի՛ տանիլ տիրոջ քունն,
Կասէ. «Քանդվի քո հօր տունն»:

Շատ չի՛ խմէք գինչ արբեցեալ,
Աչքերդ արտասուօք թացեալ,
Թէ չէ կասեն մի՛ յարուցեալ,
Խիզան կասեն. «Է՞ր ես լացեալ»:
Մանր մանկունք իմացեալ,
Կասեն. «Այս մարդս է շեթացեալ».
Յաջ և յահեակ մարդիք կացեալ,
Տարե[ա]լ իւրեանց դուռն ցուցեալ:
Սա, էն հալովն, ուրախացեալ,
Դեռ նոր խոնջայ ու կարաս բացեալ:
Ձալում գինի կարմի[ա]ցեալ,
Քանի՞ փող ես փչացուցեալ:
(ՆՅ, 95, 96)

Տէր Աստուածատուր ինձ ասաց մի բան,
Թէ. «Ինձ եկեալ է խիստ լաւ բազկաթան,
Ե՛կ, զնամք, ուտենք, վարպետ Յովնաթան,
Ձի այս օրերս է օր ուրախութեան»:

Ասաց թէ. «Երկու լաւ հաւ են բերել,

⁶ Ձեռագրում՝ իւրեց:

Երկու քաղցած մարդ եկել են, կերել,
Ըռանգ են տուել, տունս ավերել,
Ինձ քաղցած թողել և սիրտս էրել»:

Աղբած չորթան էր փիս բազկաթանն,
Էնտուց որ կերաւ Նաղաշ Յովնաթանն,
Պողազն բռնեց, կտրեց ձայնն,
Չաջողի՛ նորա դրկողի բանըն:

Տէր Աստուածատուր բղուղն ոչ բացաւ,
Իմ սիրտս խառնեց, աչքերս սևացաւ,
Ես վա՛յ կանչեցի, Յակոբն լացաւ,
Մեզնէ զատ ո՛նչով մեր ցաւն չիմացաւ:
(ՆՅ, 155)

Փա՛ռք և գոհութիւն տամք մեր ստեղծողին,
Որ մեզ համար տնկեաց ջաննաթի բաղն.
Կերակուր, հաց, գինի մեզ պարգևողին՝
Ելնենք հող և մոխիր, ծառայ, մատաղն:

Մեջլիս պիտի նստիլ աղամիանայ,
Հաղիղաթ խօսքերն ամեն իմանայ,
Իւր հոգւոյ բաղչային դռներն բանայ,
Որ էն կեանքն քաղէ ծաղիկ գամբաղն:

Սողոմոն թագաւոր և Աղէքսանդր,
Հիմի ո՞ւր է մեծ մարդ քանց նոքա ծանդր,
Չտարան յաշխարհէս մէկ հիլալ սանդր,
Ջանք արա՛, ժառանգե՛ երկնից չարբաղն:
(ՆՅ, 164)

Կարդացող շատ կայ, խելքն թեթև է,
Կասէ. «Մածունն սպիտակ չէ, սև է»,
Տոյց կու տաս, կասէ. «Այս մարդս խև է»,
Թշնամի դառնայ, բանպասանք ձևէ:

Մարդ կայ, որ փորն ձգես մէկ թագի,
Մէկ այբ չի գտնիլ, շուտ դուրս կու վագի,
Թէ սովրեցնես՝ չելնիր ըրագի,
Չի թողել մօտըն, ոտըդ կու խագի:

Կարգաւոր շատ կա՛ անեփ, անխաշ են,
Թալիմ չեն առեալ բազում դումաշէն,
Անկոթ սղեց են, բութ թավրանթաշ են,
Ո՛չ փայտ կու կտրեն, ո՛չ տախտակ տաշեն:

Մարդ կայ, որ «սուրբ» է և «ծաղկանց դաշտ» է,
Անուամբ «ճգնաւոր», «աստուածապաշտ» է,
Բայց յոյժ մեծամիտ և կամապաշտ է,
Նա դիւարնակ և կռապաշտ է:

Ձերայ պինդ լցեալ ի չարեաց անտի,
Փառասէր բանից խիստ հնազանդի
Եւ հազար մարդոյ սիրտն կու քանդի,
Կասէ. «Օրէնք կան իմուն յարգանդի»:
(ՆՅ, 170)

Յէից լուսոյն ծագեաց մեզ լոյս,
Իմաստութիւնըն Հօր Յիսուս.
Ձմեղս մեր խաչիւն բառնայ ի յուս,
Մեզ հաստատէ հաւատ և յոյս:

Որ զնոյն սիրովն ճշմարտական
Վառեալ այժմոյս տէրըն Յոհան,
Կանգնեաց տաճարըն հրաշագամ՝
Թովմայ առաքելոյ անուան:

Երկուց ամաց ետ կատարման,
Արկեալ զձեռն զանգակատան,
Ձոր շնորհիւ Սուրբ Հոգւոյն փչման,
Ձնոյն ևս հասոյց փոյթ ի վախճան:

Կարգն առաջին գաւիթս տան Տեառն,
Հաստակառոյց իբրև ըզլեռան,
Գոյնզգոյն ծաղկեալ ոսկէխառն,
Իբրև զուարճ գարուն, ամառն:

Կարգըն երկրորդ կանգնեալ սեղան,
Տաճար Աստուածածնի անուան,
Քրիստոնէիցըս պահապան,
Ընդդէմ դիւաց գէն և վահան:
(ՆՅ, 208)

Քաղցրախօս դուդի ու դունըս,
Հա բաս փուչացրիւր ունըս,
Շատ կարօտ մնաց սրտունս,
Նոր ես եղեր դարտիս խաբար:

Գովելի ես և պատուկան,
Խօսքերդ է անմահական,
Զունիմ քան զքեզ սիրական,
Ուննիցս որ կուզես՝ առ խաբար:

Դու ինձ թաջիսար, իմ պարոն,
Մօտեցել այ կանանչ գարուն,
Աչերըս դարձել այ արիւն,
Թէ ինձ ո՞վ կու բերէ խաբար:

Աղլագ արխալուղ ֆռանգի,
Երեսդ է վարդի ըռանգի,
Ես եղեր եմ իսև ու բանգի,
Հարգիզ իմ դարդին չես խաբար:

Աչքերս գետի նման վարար,
Հարգիզ չունիմ սապր ու դարար,
Նաղաշարարին խելքն տարար,
Իսկի ոչ ոք չարար խաբար:
(ՆՅ, 52)

Էլ յառաջ բերին սև ճահրակն.
Բալա-պատուհաս բամբակն,
Բերէք դոշակն, զցէք տակն.
Կասէ. «Մինչև ե՞րբ եփեմ հատիկ,
Ե՞րբ լինի՝ բարով գայ Ջատիկ»:

Քաղցր քնելու ժամանակն
Կու քաշեն վանքի զանգակն,
Դեռ մէ՛կ է կանչած քոռ որձակն,
Կասեն. «Վե՛ր կաց, ընտրէ բամբակն».
Վարողին՝ եօթ գոբակն:

Ջահրա, թող կտրի ցաւի կուռն,
Պարտականներն բռնած դուռն,
Մանողին աջիզ ավքար կանի,
Հոգի-հաւատէ կու հանի:
(ՆՅ, 108)

Այս օրերս է Բարեկենդան,
Պիտի ամենեքեան խնդան:
Հիմա ձեզ ասեմ քանի բան,
Ո՛վ սուրբ քահանայք պատուական:
Քանի ձեզ չեն ձգած մազաթ,
Ինձ արարէք փոքր ինչ ազատ,
Թէ որ իմ ասածն կանէք,
Թէ չէ յետոյ կու փոշմանէք:
Հաստատ լինիք աստուծոյ տան,
Անփորձ մնաք մինչ յաւիտեան.
Դուք յիշեցէք ի մի բերան՝
Հանգուցեալ Նաղաշ Յովնաթան:
(ՆՅ, 125)

Պաղտասար Դպիր, Տաղիկներ
XVII-XVIII դդ.
Երևան, 1985

Սըրաթև թռչնակ լինեի, թըռչեի՝ ուր կամեի,
Կամ ի յայգին իմ սիրելոյն փըջօղ քամին լինեի,
Թեթև ամպիկ պիտեի՝ հովուն առջևն իյնեի.

Դէպի յերկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր հովըն գիս, հովըն գիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըջէր, տանէր քամին գիս, քամին գիս:

Այս բոցոյս թէ ծովեր կապեմ՝ չըգիտէ իսկի մարիլ,
Այլ հանապազ նոր ի նորոյ ըսկըսանի ի վառիլ,
Զի ինքն ա՛յլ տեղ, հոգին այլ տեղ, ո՞վ կարէ կալ դադարիլ.

Դէպի յերկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր հովըն գիս, հովըն գիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըջէր, տանէր քամին գիս, քամին գիս:

(ՊԴ, 19)

Իմ հեռաբնակ հոգւոյս հատոր,
Զքեզ գըտած օրերս ո՞ւր գընաց,
Որ այժմ յինէն եղեր խոտոր,
Զքեզ տեսած օրերս ո՞ւր գընաց,
Ո՞հ, ո՞ւր գընաց, վո՞հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

Որ ինչ սիրովդ եղէ գմայլօղ,
Չեղև այժմու սըգոյս արժօղ,
Ո՞վ իմ՝ գիս միշտ ի յողբ շարժօղ,
Զքեզ գըտած օրերս ո՞ւր գընաց,
Ո՞հ, ո՞ւր գընաց, վո՞հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

(ՊԴ, 35)

Ա՛նձն իմ, ընդէ՞ր հառաչմամբ ի հոգ մըտաց վարանիս,
Կամ զի՞ ի խոր տըրտմելով, սգոց հանեալ տառապիս.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Յայսմ անցաւոր անկայուն խաբօղ, պարտօղ վայելմանս,
Զոչինչ ունիմք հաստատունս, հիմնաւորս և կայականս.

Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Վասն այսորիկ ո՛չ ոք բերկրեալ ո՛չ տըխրի,
Եւ հակընդդէմ յիրաւի ո՛չ ոք տըրտմեալ ո՛չ բերկրի.

Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Փարթամաց և տըրանկաց, մեծամեծաց և փոքունց
Նմանապէս հանդիպի նոյն պատահումն երկոցունց.

Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Բազումք ի յոյժ անպատուից թագ պարծանաց ըստացան,
Եւ շատք փառօք պերճացեալ յիրեանց փառացն ընկեցան.

Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

(ՊԴ, 57-58)

Անձն իմ առ քեզ աղաղկէ, ո՛վ բըժիշկ հոգւոյ իմոյ,
Թշնամին գիս յոյժ խոցոտեաց, ժամ է ինձ ողորմելոյ,
Յամենայն կողմանց վարանեալ ո՛չ գոյ ինձ ոք ապաւէն.

Եղկելի եմ, ողբալի եմ, քո ծառայն եմ,
Մի թողուր գիս, արարիչ իմ՝

Վասն անսպառ սիրոյ քոյ:

Ծով մեղաց գիս ալեկոծեաց, բիւր չարիք գիս պատեցին,
Որպէս ըզնաւ աննաւավար, ուր կամեցան վարեցին,

Կենդանականս այս զօրութիւն եղև ինձ ղել մոլեգին.
Եղկելի եմ, ողբալի եմ, քո ծառայն եմ
Մի թողուր զիս, արարիչ իմ՝
Վասն անսպառ սիրոյ քոյ:

Ի քո անյուն ողորմութիւնդ ապաւինեալ զօրանամ,
Ըզսխալմունս իմ յիժելով՝ հառաչանօք զղջանամ,
Թէև անթիւ եմ մեղանք իմ, ի գըթոյդ ո՛չ վերջանամ.
Եղկել եմ, ողբալի եմ, քո ծառայն եմ
Մի թողուր զիս, արարիչ իմ՝
Վասն անսպառ սիրոյ քոյ:

Մեղայ՝ քեզ, տէր, մեղայ՝, մեղայ՝,
Բիւր չարիս գործեալ, մեղայ՝,
Անօրինեալ, անառակեալ մայր մեղաց եղեալ եմ, մեղայ՝,
Քեզ մի երբէք ո՛չ լսելով երկրաքարծեալ մեղայ՝.
Եղկելի եմ, խղճալի եմ, քո ծառայն եմ,
Մի թողուր զիս, ով քաւիչ իմ՝
Վասն անսպառ սիրոյ քոյ:
(ՊԴ, 88-89)

Խաչատուր Կեչառեցի

Արքայն պատասխան երեստ.
Թէ՛ Զոգիս ելաւ, դու լռէ,
Սիրտըս վառեցիր հըրով,
Մի նեղէր, աստուած կու սիրես: /62/

<<Մայր մանկագունիս լացէք,
Վայ տուէք թըշուառականիս,
Որ բարեաց թաքաւր եղայ,
Խաւարի աչուէր ծընողիս:

Այ իմ աննման սուլթան,
Աղեքսանդր հըզօր մեծ արքայ,
Չէղէ արժանի տեսուտ,
Վայ քո մօրն Օլունպիայ>>:

Արքայս ի տապան դըրէք,
Որ ունէր շատ մի հայրենիք.
Դայ, որ աշծարիս տէր էր,
Պառկեր է կանգուն մի տեղի:
Ես ի սայ հարցմունք եղայ.
Թէ՛ Այդ ոնց քեզ հերիք,
Դարծաւ ու ճուղաբ ետուր,
Թէ՛ հերիք ու շատ մ'աւելի: /63/
Պետրոս Ղափանցի

Ըստ արքային Սողոմօնի երգոց բանին,
Անձրևք անցեալ և խոյս տըւեալ ի բաց գնացին,
Ծաղիկք բանին, ծառք տերևին և զարդարին,
Ձծայն տատրակին լըւեալ բերկրիմ՝ նոր ի նորոյ:
Ի մեղմագոյն ցօղոյ երկնի՝ իմ վարդենին
Ջըւարճացաւ ի գեղ լուսոյ ի պարտիզին,
Ես բիւրեցից զգոհութիւնս իմ վերըստին,
Գեղգեղելով՝ առաւօտեմ՝ նոր ի նորոյ:/60/

Հիշատակարաններ

ԺԳ դար

Վասն որոյ և ես Տիրացու անարժան աշակերտ գոլով
նորուն, անդառ տեղեան գրեցի զսա անարիեստ գրչութեամբ, ի
վայելս մեզ և յիշատակ, որ յապայտդ հանդիպիք և ժառանգէք
ամենալիր բուրաստանս: **Վասն որո** մախթել աղաչեմ և հայցել
պաղատիմ, որք հանդիպիք սմա ընթերցմամբ... Կատարեցաւ սա
ի Վիրապն. Մինչ կաաք մեք ի յուսման, ի **թվին 2ԺԵ** (1266):
Յիշեցէք ի Տէր /// հաճոյացեալք և ընտրեալք արժանի արհմու-
թեանց և բարի յիշատակի /ԺԳ, 346/...

Յորոց յառաջնոցն և **յազնւական** ընտրելոցն է Դաւիթ մեծն, մանաւանդ ի վեր քան զբազումս, զի ոչ մի շնորք հեղաւ ի նա, այլ բազում. թագաւորական և մարգարէական, և հայր ըստ մարմնոյ որդւոյն Աստուծոյ կոչելով... Վասն որոյ ի հաճախմանէ ընթերցմանց և զըրողաց ամենայն ումեք՝ յայլ և յայլ արիւնակաց, ի տգիտաց և ի մանգանց, բազում ինչ բան սղալական նուագենք և ոչ որպէս ի **Դաւթա**: Ջոր տեսեալ մեծն վարդապետ հասարակաց եկեղեցւոց լրման Վարդան, և օգնութեամբ Յոգւոյն ի մեկնիչ սրբոց, եղ զբնաբանս և համառօտեաց զմեկնութիւն բանիցն ի նոցունց հոգեկիր մեկնողացն՝ դիրահաս ընթերցողաց և ուսումնասիրաց, **վասն որո** յիշատակ նորա արհնութեամբ եղիցի, ամէն: /ԺԳ, 347/

ԺԴ դար

Շնորհիւ (և) ողորմութեամբ Քրիստոսի... Մխիթար անուն **պատւական** և աստուածասէր, զարդարեալ ամենայն առաքինութեամբ, ստացաւ զկենաց կտակս զայս ի հալալ արդեանց, յիշատակ հոգոյ իւրոյ և ի վարժումն որդոց իւրոց: Արդ որք լուսաւորիք յայսմ աստուածախաւս սուրբ աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաթս ձեր զՄխիթար **քահանա**, և զգուգակիցն իւր **զԽվթիկն**, և զանդրանիկ որդին իւր զՍտեփանոս, և **զքահանա** որդին իւր զԽաչգեղն, և զԳրիգորն, և զՎահանն, և զամենայն **ազգահն** իւր՝ զկենդանիս և զմեռեալս: Յիշեսջիք և զԹուերն.... /ԺԴ, 34/: ...Գրեցաւ եղանակաւոր տառս թուականիս Յայոց 257. (1305), ի թագաւորութեանս Յայոց Յեթմոյ... ի խնդրոյ **պատուական** սարկաւազի Ստեփաննոսի.../ԺԴ, 36/:

Ի ժամանակի յորում էր թուականս մեր 252. (1307), ի պակասել արդարութեանց և ի բազմանալ անօրէնութեանց մերոց առաւել բազմացաւ բարկութիւն և սաստկացաւ չարութիւն ազգին նետողաց ի **վերա** մեր՝ ազգիս քրիստոնէից, քանզի ել տղայ հասակաւ այր մին ի Խորոսանայ միականի,անուն **նորայ** Խարբանդա, որդի Արղունին **որդո** Յուլայունին: Սա բառնալ կամեցաւ զքրիստոնէութիւն աշխարհէս Յայոց և Վրաց, զոր խափանեաց տէր և ոչ կատարեցաւ չար խորհուրդ **նորայ**: Յետոյ այլ բանս մտաւ ածեաց....., առաքեց ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և

հարկ առնուլ ըստ մարդաթուի Խ. (40) **արծաթ** մինչ ի Ժ. (10)՝ ըստ կարի: Յայս ի դառն ժամանակի եղև աւարտումն սորա, ձեռամբ.../ԺԴ, 46/:

ԺԵ դար

... /Գրեցաւ/ ի **թուայքերութեան** հայկազան տաւմարիս ՋԼԵ. (1486) ամին, յանառիկ և ի տխրախնամ Արծկէ վանս Աքանչելագործ զաւրայվարիս, և հայրապետութեան տեսառն Ստեփանոսի, ի դառն և վշտալից ժամանակիս, յորում ի խիստ և ի նեղութեան և ի չար ծառայութեան կամք ազգին նետողաց զի յոյժ կեղեն զազգս քրիստոնէից: Ջոր տեսեալ զայս սուրբ գանձս աստուածայիսուս և զլուսափայլ և զպատուական մարգարիտս, և ցանկացաւ այս հոգեկեցոյց սուրբ Աւետարանիս աստուածասէր և հաւատարիմ տանուտէրն զՂարիպշէն և զորդին իւր զՓալիկ, որ տարածամ մահւամբ մարտիրոսեցաւ առ Քրիստոս մեծ տաւնի՝ աւաք զատկի, յօր կիրակի.../ԺԵ Գ հ, 85):

ԺԶ

Ով ոյք հանդիպիք այս **լուսայգարդ** և **վարդայիղթիթ** սբ. Աւետարանիս կարդալով կամ տեսանելով կամ արիւնակ դնելով, նա լի սրտիւ և բոլոր հաւատով Աստուած ողորմի ասացէք տէր Յայրապետ հերապետին և ամենայն արեան մերձաւորացն նորին. և որ ասէ զԱստուած ողորմին Աստուած իւրն ողորմեսցի յաւուրըն դատաստանին. Ամէն: Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ի **թվականութիւնս** Յայոց ի Ռ ու 52 (1607) ամին, ի հայրապետութիւն Ախթամարա (յ) տեսառն տէր Գրիգորիսի, Աստուած զինքն **այնփործ** և **այնսասան** պահէ ի յայժմունս ժամանակիս. Ամէն: Արդ՝ ես սուտասան Ստեփանոս **էրեց** տեսի զսէր և զփափաք տէր Յայրապետ կրոնաւորին յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւդաց իւրոց. Ամէն (ԺԶ, Ա հ, 255):

Արարչայգործ Աստուած զայն քահանայն և զայն միաբան արհնէ որ լաւ խընամ տանէ սբ. Աւետարանիս, պահէ ի հրոյ, ի ջրոյ, ի հարամկէ ի յամենայն պատահարից ազատէ՝ Աստուած զիրեանքն ի յիրեանց մեղացն ազատէ. Ամէն (ԺԶ, Ա հ, 256):

ՍԿՁԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ

1. Առաքել Սիւնեցի, Աղամզիրք, Երեւան, 1989:
2. Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, Երեւան, 1993:
3. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վիեննա, Ամերիկեան ընկերութիւն Գրոց Սբոց, 1929:
4. Բուզանդ, Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Երեւան, 1987:
5. Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան, Երեւան, 1987:
6. Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Երեւան, 1962:
7. Եզնիկ, Եզնրկայ Վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Երեւան, 1994:
8. Եղիշե, Եղիշե Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1989:
9. Ջաքարիա Ազուլեցու Որագրութիւնը, Յերեվան, 1938:
10. Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, Երեւան, 1988:
11. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941:
12. Յովհաննու Որոտենցոյ Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի, Երեւան, 1956:
13. Հայերեն ձեռագիր հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, ԺԴ, Երևան, 1950, ԺԵ, Գ հատոր, Երևան, 1967, ԺԵ դար, հատոր Ա, Երևան, 1974:
14. Նահապետ Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Երեւան, 1988:
15. Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Երեւան, 1983
16. Պաղտասար Դպիր, Տաղիկներ, Երևան, 1985:
17. Ֆրիկ, Տաղեր, Երեւան, 1982:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Մաս II, Երեւան, 2013:
2. Արսէն Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987:
3. Գյուլբուղադյան Ս., Հայերենի ուղղագրութեան պատմություն, Երեւան, 1973:
4. Գոճանեան Հ. Պօղոս, Ուղեցոյց դասական ուղղագրութեան, Վիեննա-Երեւան, 2006:
5. Իշխանեան Ռաֆայէլ, Հայերէն դասական ուղղագրութեան կանոններ, Երեւան, 1991:
6. Համբարձումյան Վ., Հայոց լեզվի դասական ուղղագրութեան հիմունքներ, Երեւան, 1993:
7. Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, հատոր Ա, Բ, Երեւան, 2000:
8. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Երեւան, 2009:
9. Զօլաքեան Յ., Հայերենի աւանդական ուղղագրութիւն, Հալէպ, 2000:
10. Պողոսյան Ն., Բառգրքույկ հայերենի ավանդական ուղղագրութեան, Երևան, 2009:
11. Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Երեւան, 1991:
12. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Երեւան, 2000:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Մեսրոպյան այբուբեն.	5
Հայերենի դասական ուղղագրությունը	6
Է/Ե ձայնավորների ուղղագրությունը	7
Յ/Զ հնչյունների ուղղագրությունը և արտասանությունը	12
Ու/Լ/վ հնչյունների ուղղագրությունը և արտասանությունը	16
Գրաբարի երկբարբառների և եռբարբառների ուղղագրությունը	19
Աւ երկբարբառի ուղղագրությունը և արտասանությունը	20
Եա երկբարբառի ուղղագրությունը և արտասանությունը	23
Եւ/իւ երկբարբառների ուղղագրությունը և արտասանությունը	25
Այ/ոյ երկբարբառների ուղղագրությունը և արտասանությունը	26
Եռբարբառների ուղղագրական և արտասանական կանոնները	28

Թելադրության նյութեր	29
Ուղղագրությունը Ժ-ԺԸ դարերում	44
Է-Ե ձայնավորների ուղղագրությունը	46
Աւ > օ > ո ուղղագրական անցումը	48
Յ -Յ հնչյունների ուղղագրությունը	49
Վ-ՈՒ-Ի հնչյունների ուղղագրությունը	51
Գրաբարյան երկբարբառների, եռաբարբառների և բա- ղաձայնների ուղղագրության փոփոխությունները միջին դարերում.....	52
Միջնադարում ուղղագրական փոփոխությունները վկա- յող բնագրային տեքստեր	58

**Ն.Յ.ԴԻԼԲԱՐՅԱՆ, Ա.Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ,
Ա.Լ.ՅՈՒԶԲԱՇՅԱՆ**

**ՀԱՅԵՐԵՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԿՐԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Վարժություններ, թելադրության նյութեր, բնագրեր
Երկրորդ բարեփոխված հրատարակություն*

Հրատ. պատվեր N 593
Չափսը՝ 60x84¹/₁₆, 5.25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան 24: